



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

COUNTERPART
INTERNATIONAL



**ՁԵՌՆԱՐԿ
ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏՄԱՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆԶ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Երևան 2011

Սույն հաշվետվությունը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության No AID-111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում՝ Մոնցիալական արդարություն՝ ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են Մոնցիալական արդարություն՝ ՀԿ-ին և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

**ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ I . ԱԶՍՏԱԶՐԿՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ	
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ (իրավական և սոցիալական տեսակետներ).....	6
Դատապարտյալների սոցիալական վերականգնումը:	
Մահամտումը միջազգային իրավական ակտերում և ՀՀ օրենսդրությամբ	6
ԳԼՈՒԽ II .ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ	
ՊՐԱԿՏԻԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՎ.....	10
Դիտարկումներ և նկատառումներ.....	10
Առաջարկություններ	12
ԳԼՈՒԽ III . ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԶՍՏՄԱՆ	
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ԴԱՍԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ	16
Պատժից ազատման փուլի հոգեբանական յուրահատկությունները	16
Պատժից ազատվող դատապարտյալների հետ	
հոգեբանական աշխատանքների առանձնահատկությունները	19
Ըստ առաջնահերթությունների առաջարկություններ	
այս փուլում անձանց հոգեվիճակը կայունացնելու ուղղությամբ	23
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	25
ՀԱՎԵԼՎԱԾ 1 Աշխատանք փնտրողի ուղեցույց.....	26
ՀԱՎԵԼՎԱԾ 2 Աշխատանքի ակումբները	27
ՀԱՎԵԼՎԱԾ 3 Ինչպես պատրաստվել հարցազրույցի	28
ՀԱՎԵԼՎԱԾ 4 Հարցազրույցի մասնակցություն	29
ՀԱՎԵԼՎԱԾ 5 Ինչպես կազմել ռեզյումե (ինքնակենսագրական)	33
ՀԱՎԵԼՎԱԾ 6 Ազատվող դատապարտյալի գնահատման հարցաթերթ	35
ՀԱՎԵԼՎԱԾ 7 Խմբային աշխատանքում ցանկալի հոգեբանական խաղեր	37
ՀԱՎԵԼՎԱԾ 8 Ինքնակարգավորման հոգեբանական պրակտիկ տեխնիկաներ	
.....	40

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

2001 թվականին ՀՀ քրեակատարողական ծառայությունում ստեղծվեցին սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններ, որոնց անմիջական գործունեությունը կապված է ինչպես քրեակատարողական հիմնարկի, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության և դատապարտյալների՝ ազատվելուց հետո հասարակություն վերադառնալու և հարմարվելու գործողությունների հետ: Դատապարտյալների ազատման նախապատրաստման աշխատանքները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի թիվ 44-Ն հրամանով: Դատապարտյալների վերաինտեգրման համար երաշխիքների ստեղծման անհրաժեշտության մասին են վկայում նաև ԵՄ ՏԲանտային կանոնները՝, ՄԱԿ-ի ՏԲանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները՝, ՏՄոշտանգումների կանխարգելման կոմիտեի՝ համապատասխան նորմերը և այլն: Այսուհանդերձ, ուսումնասիրությունները վկայում են, որ ազատված դատապարտյալների հասարակությունում վերաինտեգրումը որպես դրա լիիրավ անդամ, արդիական խնդիր է: Եվ պատահական չէ, որ բազմաթիվ են այն դեպքերը, երբ այդ անձինք հարկադրված են լինում հաճախ, ապարդյուն փնտրտուքից հետո, պատսպարվել իրենց համար հայտնի ռեֆերենտ խմբերում:

Հաշվի առնելով խնդրի արդիականությունը՝ առաջնային դարձավ իրականացնել մարդու իրավունքների պաշտպանության համալիր ծրագիր՝ դատապարտյալներին տրամադրելով ուղղակի իրավունքների պաշտպանության ոլորտի հստակ գիտելիքներ և ապահովելով սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Ծրագրի արդյունքները և ամփոփված առաջարկները կարող են հիմք հանդիսանալ պետական լիազոր մարմինների ու պատասխանատու պաշտոնյաների համար՝ հնարավորինս արագ և օպտիմալ լուծում գտնել պատժից ազատման նախապատրաստվող դատապարտյալների սոցիալ-հոգեբանական և իրավական պատրաստումը քրեակատարողական հիմնարկում կազմակերպելու ուղղությամբ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փոփոխություններ կատարել ոլորտի օրենսդրական դաշտում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկում պատիժ են կրում առաջին անգամ հանցագործություն կատարելու համար դատապարտված անձինք, ինչպես նաև այն, որ այնտեղ պահվող դատապարտյալները հիմնականում երիտասարդ տարիքի են՝ 25-45 տարեկան, ինչը հնարավորություն է տալիս գտնել առավել արդյունավետ միջոցներ նրանց հետագա վերաինտեգրման համար, ծրագիրն իրականացվել է հենց այդ հիմնարկում:

Մույն փաստաթղթի նպատակն է աջակցել պատժից ազատվող դատապարտյալների սոցիալական վերականգնման գործընթացին, նպաստել նրանց հետագա արդյունավետ ինտեգրմանը հասարակության մեջ, տեղեկատվություն տրամադրել նրանց համար անհրաժեշտ ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև աջակցել քրեակատարողական ծառայողներին, պատժից ազատման ծրագրեր իրականացնելիս:

Այն կոչված է աջակցելու ոլորտում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերին՝ ծրագրեր մշակելիս կամ գործողություններ նախատեսելիս առավել իրազեկ որոշում կայացնելու համար: Այս ուղղությամբ տարբեր ուսումնասիրություններ ու գնահատումներ են իրականացվել, սակայն մի շարք կարևոր հարցեր այդպես էլ մնացել են չբարձրացված:

Ինչպես շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում, դատապարտյալներին ազատելու նախապատրաստման ծրագրերն ու մեխանիզմները բավարար չափով դինամիկ չեն, եթե չասենք՝ անբավարար են: Մույն ծրագրի իրականացմամբ լիարժեքորեն չեն տրվի բոլոր հարցերի պատասխանները, սակայն յուրաքանչյուր դերակատար կարող է գտնել մի խնդիր, որի լուծմանը կարող է ձեռնամուխ լինել: Համենայնդեպս, հուսով ենք:

ԳԼՈՒԽ I

ԱԶՏԱՏՁՐԿՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ (իրավական և սոցիալական տեսակետներ)

Դատապարտյալների սոցիալական վերականգնումը: Սահմանումը միջազգային իրավական ակտերում և ՀՀ օրենսդրությամբ

Ազատազրկումը ենթադրում է սոցիալական հմտությունների կորուստ, առավել ևս երկարաժամկետ ազատազրկումը: Դրանից չեն կարող խուսափել նույնիսկ լավագույն բանտերն ու ազատազրկման վայրերը: Միջազգային պրակտիկան վկայում է, որ անձի դեգրադացումը ազատազրկման անխուսափելի հետևանքներից է, որը հատկապես բնորոշ է երկարաժամկետ ազատազրկման դատապարտվածներին: Այդ իսկ պատճառով, այսօր, հատկապես արդի եվրոպական բանտային համակարգերում, կիրառվում են աշխատանքային համալիր մեթոդներ՝ ազատազրկման բացասական հետևանքները վերացնելու և անձին լիարժեք և արդյունավետ վերաինտեգրելու նպատակով:

Առաջին հիմնական սյունը, որ արդի բանտային համակարգերի սկզբունքներից է, հետևյալն է. ազատազրկման առաջին իսկ օրից անձի հետ տարվող բոլոր աշխատանքներն ուղղվում են նրա ազատման նախապատրաստմանը և սոցիալական վերականգնմանը: Ազատազրկման վայրից վերադարձած դատապարտյալի սոցիալական վերականգնումը համալիր գործընթաց է: Ընդհանուր առմամբ սոցիալական վերականգնումը միջատությունների, ներազդման մեթոդների ամբողջություն է՝ ուղղված անձի կորսված ունակությունների և հմտությունների վերականգնմանը, ինքնուրույն սոցիալ-կենցաղային գործունեությամբ զբաղվելուն: Դատապարտյալների սոցիալական վերականգնումը բազմամակարդակ գործընթաց է, որն իր մեջ ներառում է նրանց բարոյական, հոգեբանական, գործնական պատրաստականությունը.

- հասարակության մեջ վերաինտեգրվելուն,
- նոր սոցիալական դերերի յուրացմանը,
- օգտակար կապերի հաստատմանը կամ վերահաստատմանը,
- հասարակական կյանքին վերադառնալուն և հարմարվելուն

խոչընդոտող բացասական գործոնների չեզոքացմանը կամ բացառմանը,

Այս գործընթացն իր բովանդակությամբ բավականին բարդ է և պահանջում է պետական և/կամ ոչ պետական կառույցների ակտիվ ներգրավվածություն:

Սոցիալական վերականգնումը կապված է դատապարտյալների աշխատունակության և կարգավիճակի վերականգնման հետ: Այն ենթադրում է նրանց վերականգնումը որպես սոցիալական սուբյեկտի: Դատապարտյալների սոցիալական վերականգնման հիմքը պետք է հանդիսանա նրանց նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը բոլոր մակարդակներում. մակրոմակարդակ (ընդհանուր հասարակությունը), մեզոմակարդակ (սոցիալական ինստիտուտներ, աշխատանքի վայրեր, հասարակական կազմակերպություններ), միկրոմակարդակ (ընտանիք, հարազատներ, հարաբերությունների նեղ շրջանակ):

Միջազգային իրավական ակտերը հստակ ուշադրություն են դարձնում խնդրին՝ սահմանելով այն առաջավոր և հիմնավորված դրույթները և ընդհանրացված փորձը, որոնց կիրառումը կոնկրետ սոցիոմշակութային համատեքստում հասանելի է և արդյունավետ:

Մասնավորապես, նվազագույն բանտային կանոնները հստակ ուղենիշ են բանտարկության վնասակար ազդեցության նվազեցման և ազատվելուց հետո կյանքին նախապատրաստելու համար: Կանոնների 58-րդ կետը սահմանում է՝ «...բանտարկության կամ ընդհանրապես ազատությունից զրկելու, դատապարտելու նպատակն ու հիմնավորումը, վերջին հաշվով հանդիսանում է հասարակության պաշտպանությունը և հասարակությանը սպառնացող հանցագործությունների կանխումը: Այդ նպատակներին կարելի է հասնել սուկ այն դեպքում, եթե ազատագրկման ժամկետն ավարտելով և հասարակության մեջ կանոնավոր կյանքի վերադառնալով՝ իրավախախտը ոչ միայն պատրաստ է, այլև ունակ է ենթարկվելու օրենսդրությանն ու ապահովելու իր գոյությունը»: Այսինքն՝ ցանկացած բանտարկություն արդեն իսկ պետք է ներառի դատապարտյալին հասարակություն վերադարձնելու ճանապարհը: Նույն կանոնների 64-րդ կետը խոսում է սոցիալական հեռանկարների իրավունքի մասին՝ «...Հասարակության պարտավորությունները բանտարկյալի ազատմամբ չեն դադարում: Ուստի անհրաժեշտ է ունենալ պետական կամ մասնավոր մարմիններ, որոնք ունակ են գործուն հոգածություն ցուցաբերելու ազատված բանտարկյալներին՝ պայքարելով այն նախապաշարումների դեմ, որոնց զոհն են նրանք հանդիսանում, և օգնելով

նրանց՝ կրկին ընդգրկվել հասարակական կյանքում»: Նվազագույն ստանդարտ կանոնների 79-81-րդ հոդվածները սահմանում են դատապարտյալի կապն արտաքին աշխարհի հետ և խնամակալությունն ազատվելուց հետո: Շատ կարևոր է 80-րդ հոդվածը, ըստ որի «...պատժաժամկետն անցկացնելու հենց սկզբից հարկավոր է մտածել ազատագրվելուց հետո բանտարկյալին սպասող ապագայի մասին: Ուստի պետք է օգնել նրան՝ հիմնարկի պատերից դուրս գտնվող անձանց կամ հաստատությունների հետ կապեր հաստատելու և ամրապնդելու գործում, որոնք ի վիճակի են «...ազատվելուց հետո աջակցել հասարակական կյանքին նրա ընդգրկմանը...»: Այդ հաստատությունների հետ հարկավոր է խորհրդակցել բանտարկյալների հետագա կյանքի հեռանկարների մասին՝ նրանց ազատագրվման հենց սկզբից...»: Ցանկալի է, որպեսզի այդ հաստատությունների աշխատանքը կենտրոնացվի կամ համաձայնեցվի հնարավորության սահմաններում, որպեսզի ապահովվի նրանց աշխատանքի առավելագույն արդյունավետ օգտագործումը»: Այս դրույթը շատ կարևոր է, և դրա գործարկման հնարավորության դեպքում իսկապես կարելի է հասնել շոշափելի արդյունքների: Ընդհանուր առմամբ եվրոպական առաջավոր փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դատապարտյալների սոցիալական վերականգնման խնդիրը ներառում է հետևյալ հարցերի կարգավորումը՝ բնակության վայր՝ մշտական կամ ժամանակավոր, աշխատանք, ոչ հանցածին միկրոմիջավայր, կրթություն և ընտանիք: Ժամանակային առումով այս խնդիրների լուծումը ընթացում է փուլերով, որից ելնելով դատապարտյալի սոցիալական վերականգնման գործընթացը բաժանվում է մի քանի փուլերի, որոնց հաջող իրականացման դեպքում անձը լիարժեք ինտեգրվում է հասարակություն:

1. Ազատման նախապատրաստում
2. Բուն ազատում
3. Հետազատում /after care/

Առաջին փուլը պատժից ազատմանը նախորդող եռամսյա շրջանն է, որի ընթացքում միջոցներ են ձեռնարկվում ազատումից հետո խնդիրների լուծման համար: Այս ընթացքում ՔԿ հիմնարկի վարչակազմը պարտավոր է նախադրյալներ ստեղծել գործընթացի շարունակականության համար: Բուն ազատման գործընթացը հիմնարկի և համայնքի երկուստեք պատասխանատվության խնդիրն է: Եվ

վերջապես, հետազատման շրջանը՝ ազատմանը հաջորդող 1 տարին ապահովում է անձի սահուն ինտեգրումը ընդհանուր հասարակություն: Հետազոտությունները վկայում են, որ այս շրջանում հատկապես մեծ է կրկնահանցագործության հավանականությունը, քանի որ նախկին ազատազրկվածը բախվում է բազում նոր խնդիրների: Սոցիալական վերականգնման դերակատարությունն այս շրջանում վերապահված է համայնքների սոցիալական ծառայություններին, վերականգնողական կենտրոններին, պրոբացիոն ծառայություններին:

Մեր օրենսդրությամբ նույնպես մասնակիորեն սահմանված են սոցիալական վերականգնման և պատժից ազատման նախապարտաստման հարցերը: Մասնավորապես՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալների ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով: Չնայած դրան՝ ցանկալի կլիներ օրենքով սահմանել նաև սոցիալական վերականգնումը և դրա իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները, ինչպես նաև հասնել ազատված դատապարտյալների սոցիալական վերականգնման խնդիրների լուծմանը:

«ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված ներքին կանոնակարգի նպատակներից մեկը սահմանվում է «...աջակցել դատապարտյալին՝ նրանում ձևավորելու և զարգացնելու այնպիսի հմտություններ և ունակություններ, որոնք կօգնեն նրան պատժից ազատվելուց հետո կազմակերպել հետազակյանք...»: Այնուհետ, 121-րդ հոդվածը սահմանում է պատիժ կատարող հիմնարկի վարչակազմի պարտավորությունները պատժից ազատվող դատապարտյալի աշխատանքը և կենցաղը կարգավորելու հարցում, ըստ որի հիմնարկի վարչակազմը սոցիալական վերականգնման հարցերով համագործակցում է հասարակական և այլ կազմակերպությունների ու մարմինների հետ: Այնուհետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ՀՀ արդարադատության նախարարի թիվ 44 –Ն հրամանով նախատեսվում է ազատման նախապարտաստման ծրագիր, որն իր մեջ ներառում է միջոցառումների շարք, այդ թվում՝ խորհրդատվություններ և գործնական քայլեր: Նշված

հրամանի 43-րդ կետով նախատեսվում են դատապարտյալի ազատման ծրագիր կազմելը, այդ թվում՝ կարևոր խնդիրների վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը, դատապարտյալին աշխատանքային, սոցիալ-կենցաղային ապահովման հարցերում օժանդակելը, ինչպես նաև պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի հասարակությանը վերաինտեգրվելու, նրան շրջապատող միջավայրում գտնվող անձանց հետ փոխհարաբերությունների բարելավման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելը, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդվածի համաձայն և նշված հրամանով սահմանված կարգով, դատապարտյալի դիմումի հիման վրա զբաղվածության պետական ծառայության տարածքային մարմինները տեղեկացվում են դատապարտյալի՝ առաջիկայում ազատվելու և աշխատանք փնտրելու մասին, գրության մեջ հայտնելով նաև նրանց սեռը, տարիքը աշխատունակությունը, կրթությունը և մասնագիտությունը: ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նաև դատապարտյալին նախկին բնակության վայրում հաշվառելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը, մասնավորապես՝ ոստիկանության համապատասխան բաժին դատապարտյալի բնակության վայրի մասին հարցում ուղարկելը: Գործող օրենսդրությամբ ՔԿ հիմնարկի անձնակազմը ազատումից երեք ամիս առաջ հարցում է ուղարկում դատապարտյալի նշած բնակավայրի ոստիկանության տարածքային բաժին ճշտելու դատապարտյալի հնարավոր բնակության հարցը: Նախատեսում է նաև միանվագ դրամական օգնություն և սեզոնային հագուստ: Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված են աշխատաշուկայում անմրցունակ խմբերը և նրանց տրվող լրացուցիչ երաշխիքները: Նույն հոդվածով սահմանված են որպես սոցիալական պաշտպանության լրացուցիչ երաշխիքների իրավունք ունեցող, աշխատանքի տեղավորման գործում դժվարություններ կրող և աշխատաշուկայում հավասար մրցակցության անընդունակ աշխատանք փնտրող չզբաղված անձանց խմբերը՝ այդ թվում՝ ազատագրվման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառող հիմնարկներից վերադարձած և վերադառնալուց հետո մեկ տարվա ընթացքում, զբաղվածության պետական ծառայություն դիմած անձինք:

ՀՀ կառավարության 14 նոյեմբերի 2002 թվականի N 1823-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգում գործակալության գործառույթներում սահմանված է «աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրերի մշակում և իրականացում՝ հանրապետական ու տարածքային համաձայնեցման կոմիտեների հետ համատեղ»:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ դատապարտյալի սոցիալական վերականգնմանն ուղղված ՔԿ հիմնարկների վարչակազմերի, զբաղվածության գործակալության գործառույթները հիմնականում սահմանված են, սակայն որքանով են դրանք արդյունավետ, արդյոք առաջարկվող մեխանիզմներն իսկապես նպաստում են ազատվող դատապարտյալների խնդիրների լուծմանը, և որքանով է համագործակցված այդ խնդիրների լուծումը պետական և հասարակական տարբեր մարմինների գործառույթների շրջանակում: Մրանք հարցեր են, որոնց պատասխանների վերաբերյալ ստորև ներկայացված են դիտարկումներ և վերլուծություններ:

ԳԼՈՒԽ II
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՎ

Դիտարկումներ և նկատառումներ

Մեր դիտարկումները և ծրագրի շրջանակում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քրեակատարողական հիմնարկները իսկապես աշխատանք են տանում սոցիալական վերականգնման ուղղությամբ ազատման նախապատրաստման շրջանում: Այս փուլում գործառույթներ ունի հիմնականում հիմնարկի վարչակազմը:

Ինչպես արդեն նշվել է, դատապարտյալների ազատումից հետո հիմնական խնդիրը, որը տեսնում ենք, բնակարանի կամ ինչպես ընդունված է միջազգային պրակտիկայում թեկուզ ժամանակավոր կացարանի առկայությունն է, ինչը հասարակության մեջ դատապարտյալի կենսագործունեության առաջին հենասյունն է: Գործող օրենսդրությամբ ՔԿ հիմնարկի անձնակազմը ազատումից երեք ամիս առաջ հարցում է ուղարկում դատապարտյալի նշած բնակավայրի ոստիկանության տարածքային բաժին՝ ճշտելու դատապարտյալի հնարավոր բնակության հարցը: Ծրագրի շրջանակում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բնակարանային հարցի կարգավորման համար ազատվող դատապարտյալների վերաբերյալ հարցումներ էին ուղարկվում ոստիկանության մարմիններ ճշտելու նրանց հետագա բնակության վայրում հաշվառվելու հնարավորությունը ըստ դատապարտյալի կողմից ներկայացված դիմումի և հասցեի: Հարցումներ չէին ուղարկվել միայն այն դեպքերում երբ դատապարտյալն ազատվել էր համաներումով, ներումով, դատարանի դահլիճից: Նշված բնակարանում կամ տանը հաշվառման հնարավորության դեպքում խնդիրը կարծես լուծվում է, սակայն մեր պրակտիկան ցույց տվեց, որ քիչ չեն այն դատապարտյալները, որոնք չունեն որևէ բնակության վայր հաշվառվելու հնարավորություն, և փաստացի ազատվելուց հետո նրանք դառնում են անօթևան, անտուն, ինչը մեծացնում է կրկնահանցագործության հավանականությունը: Ծրագրի շրջանակներում փորձեցինք գտնել որևէ մեկ ժամանակավոր ապաս-

տան, որտեղ նախկին դատապարտյալները կարող են բնակվել, սակայն որոնումները արդյունք չտվեցին:

Երկրորդ հիմնական խնդիրը, որ դատապարտյալը ունենում է ազատվելուց հետո, իր կենսագործունեության համար անհրաժեշտ օրինական ճամպարհով նյութական միջոցներ ստեղծելու համար աշխատանքն է: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պատժից ազատվող դատապարտյալների վերաբերյալ ազատումից 3 ամիս առաջ հաղորդումներ էին ուղարկվել դատապարտյալի բնակության տարածքային զբաղվածության կենտրոն, որտեղ հայտնվում էր դատապարտյալի ազատման ժամկետի վերաբերյալ և նաև որոշ տեղեկատվություն՝ մասնավորապես, տարիք, կրթություն, մասնագիտություն: Տեղեկատվությունը ուղարկվում էր ի գիտություն, քանի որ բուն գրանցման ընթացակարգը հնարավոր է իրականացնել միայն դատապարտյալի անձամբ զբաղվածության գործակալություն ներկայանալու դեպքում: Ըստ դիտարկումների հարցումներ ուղարկվել էին գրեթե բոլոր դատապարտյալների վերաբերյալ:

Մեր ծրագրում ընդգրկված շահառուների 95 %-ը ցանկություն էր հայտնել աշխատելու և հաստատակամ էր գտնելու օրինական աշխատանք: Սակայն, գործնականում, Հայաստանում գործազրկության բավականին բարձր ցուցանիշի պարագայում հեշտ չէ դատապարտյալին աշխատանք գտնելը, հատկապես եթե նա.

- չունի որոշակի մասնագիտական հմտություններ /կամ կորցրել է դրանց որակը/

- չունի կրթություն՝ միջնակարգ, բարձրագույն.

- ունի դատվածություն

- չի տիրապետում աշխատանք գտնելու հմտություններին

Այս խնդիրների պարագայում շատ կարևոր է վերջինը, որովհետև նույնիսկ կրթության պարագայում դատապարտյալը հաճախ բխվում է գործատուին գտնելու տարրական փորձառության բացակայության կամ պակասի խնդրին:

Բուն ազատման ընթացքում դատապարտյալներին էին հանձնվում նրանց անձնական իրերը, ինչպես նաև անձնական փաստաթղթերը, որոնք առկա են նրա անձնական գործում: Դիտարկումները ցույց տվեցին, որ կային դատապարտյալներ, որոնք անձնագիր չունեին, կամ դրանց վավերության ժամկետն անցել էր, չունեին սոցիալական քարտ: Ազատումից հետո որևէ ծառայություն կամ

կենտրոն չէր իրականացնում միջազգային պրակտիկայում առկա հետխնամքի գործառույթներ: Ըստ զբաղվածության տարածքային մարմինների աշխատակիցների իրենք հետևողական են նախկին դատապարտյալներին աշխատանքի ընդգրկելու հարցում, սակայն տարածքային մարմիններ այցելում են թվով շատ քիչ դատապարտյալներ: Իրապես գործակալություն ներկայացած, գրանցված և ընդգրկված նախկին դատապարտյալների թիվը շատ փոքր էր, ինչը ցույց տվեց, որ ներկայումս գործակցության այս ձևը արդյունավետ չէ, քանի որ դատապարտյալները ազատվելուց հետո շատ հազվադեպ են դիմում այդ մարմիններին:

Օրագրի ընթացքում կատարված վերլուծության համաձայն կան մի քանի գործոններ, որոնք խանգարում են, որ ազատված նախկին դատապարտյալները դիմեն զբաղվածության գործակալության տարածքային մարմիններին: Մասնավորապես՝

-նրանց նկատմամբ մեծ անվստահությունը և որևէ ակնկալիք չունենալը

-ՔԿ հիմնարկում գործակալության կողմից առաջարկվող ծառայությունների վերաբերյալ խորհրդատվության պակասը,

-ՔԿ հիմնարկների և տարածքային մարմինների միջև համագործակցության պակասը:

Հետազատման փուլի սոցիալական վերականգնման մյուս խնդիրները ևս բաց էին, քանի որ որևէ պետական մարմին պարտավորություն չունի աջակցելու նախկին դատապարտյալին՝ լուծելու իր խնդիրները: Կատարված տնայցերի ընթացքում նկատվեց նախկին դատապարտյալներին սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերելու իրական կարիք:

Դատապարտյալների ազատումից հետո շատ կարևոր է ընտանիքի հետ փոխհարաբերությունների վերահաստատումը կամ պահպանումը, քանի որ ընտանիքը այն միկրոմիջավայրն է, որտեղ դատապարտյալները առավել վստահ և պաշտպանված պիտի զգան, մյուս կողմից իրենց մասնակցությունը բերեն ընտանեկան կապերի ամրապնդման գործընթացին: Վարչակազմի կողմից որոշակի աշխատանք տարվում էր ընտանեկան կապերի ուղղությամբ պատժի կրման ընթացքում: Իրականում սա միշտ չէ, որ հեշտ է ձեռք բերվում, հատկապես երկարաժամկետ դատապարտվածների պարագայում: Այս առումով հատկանշական էր մի երիտասարդի խոսքը այն մասին,

թե ինչպես է տեսնում իրեն հոր դերում. «Իսկ ինչպես շփվեմ իմ 4 տարեկան երեխայի հետ, երբ նրան ծնվելուց հետո հազվադեպ եմ տեսել»: Այս իմաստով դատապարտյալները շատ անվստահ են դառնում և անհրաժեշտ է խորհրդատվական աշխատանք՝ ընտանեկան դերերի, փոխհարաբերությունների վերաբերյալ: Սակայն ազատվելուց հետո այս խնդրի լուծումը ևս հասցեականություն չուներ:

Առաջարկություններ

Կարծում ենք, որ առաջարկվող լուծումները շատ գործնական են և դրանց կիրառումը կաջակցի բարելավելու սոցիալական վերականգնման պրակտիկան:

Քանի որ քրեակատարողական հիմնարկներում կան սոցիալական աշխատողներ և հոգեբաններ, ապա աշխատանքի կարևորագույն մաս կարող են ապահովել այս մասնագետները, եթե իրականացնեն նախապատրաստման առավել բովանդակային աշխատանքներ, մասնավորապես՝ ՔԿ հիմնարկներում անհրաժեշտ է ներդնել դատապարտյալների ազատման նախապատրաստման, սոցիալական հմտությունների և աշխատանք գտնելու ուսուցման ծրագիր: Այդ նպատակով կազմակերպել ՔԿ հիմնարկների սոցիալական աշխատողների վերապատրաստում, որպեսզի վերջիններս կարողանան տիրապետել նաև սոցիալական ուսուցման ծրագրերի:

Փաստաթղթային խնդիրների առկայությունը հաճախ խոչընդոտ է հանդիսանում ինչպես աշխատանք գտնելուն, այնպես էլ այլ տարբեր սոցիալ-կենցաղային խնդիրներ լուծելու ճանապարհին: Ազատման նախապատրաստման շրջանում ևս մեկ վերանայում պիտի կատարվի, արդյոք անձը ունի սոցիալական քարտ և անձնագիր, փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են աշխատանքային գործունեություն իրականացնելու համար: Պետք է բարձրացնել նաև անձի մոտիվացիան հատկապես աշխատանք գտնելու ուղղությամբ:

Գործնականում, Հայաստանում գործազրկության բավականին բարձր ցուցանիշի պարագայում **հեշտ չէ դատապարտյալին աշխատանք գտնելը**, հատկապես եթե նա չունի որոշակի մասնագիտական հմտություններ (կամ կորցրել է դրանց որակը), չունի կրթություն՝ միջնակարգ, բարձրագույն, ունի դատվածություն, չի տիրապետում աշխատանք գտնելու հմտություններին:

Այս խնդիրների պարագայում շատ կարևոր է վերջինը, որովհետև նույնիսկ կրթության պարագայում դատապարտյալը հաճախ բախվում է գործատունի գտնելու տարրական փորձառության բացակայության կամ պակասի խնդրին:

Այսպիսով, եթե ցանկանում ենք աջակցել նախկին դատապարտյալին գտնել աշխատանք, պիտի ցույց տանք այն հնարավոր գործատուներին, որոնք աշխատանք են առաջարկում:

Առաջին գործատու հանդիսանում են զբաղվածության գործակալությունները, որոնց ռեսուրսները և առաջարկող ծառայությունները կարող են առավել արդյունավետ լինել:

Ինչպես հաղթահարել խնդիրը: Դրա լավագույն լուծումը կարող է լինել տարածքային կենտրոնի աշխատակիցների պարբերական այցերը ՔԿ հիմնարկներ, թափուր աշխատատեղերի վերաբերյալ էլեկտրոնային կամ թղթային տարբերակով տեղեկատվության տրամադրումը, հնարավոր թեկնածուների ընտրությունը դեռևս պատժի կրման ընթացքում: Այս բոլոր աշխատանքները նախնական մոտիվացիա և վստահություն կստեղծեն դատապարտյալի մոտ հետագայում ազատվելուց հետո կրկին անգամ կենտրոն այցելելու համար: Այս առումով գտնում ենք, որ անհրաժեշտ են նաև իրավական ակտերում որոշակի բարեփոխումներ, գործակալության տարածքային մարմինների և ՔԿ հիմնարկների գործակցությունը սահմանող լրացումներ: Նշված օրենսդրական փոփոխությունները առավել հստակ կդարձնեն երկկողմանի պարտավորությունները: Նշվածի լույսի ներքո, պետք է կարևորել նաև այս ոլորտում միջազգային փորձի և իրավական նորմերի պահանջների իմացության պակասը:

Անհրաժեշտ է իրականացնել ոլորտը կարգավորող միջազգային իրավական ակտերի ուսումնասիրություններ ու վերլուծություններ, ՀՀ համանուն իրավական ակտերի հետ համեմատական վերլուծություններ, ինչպես նաև մանրամասն ուսումնասիրելով միջազգային առաջավոր փորձը, փորձել հնարավորինս ներդնել կոնկրետ վերականգնողական մոդել (հատկապես ազատմանը նախորդող ժամանակահատվածում դատապարտյալի շահերով շահագրգիռ պետական ու ոչ պետական մարմինների ու կազմակերպությունների հետ քրեակատարողական ոլորտի համագործակցության ուղղությամբ):

Երկրորդ հիմնական գործատուն միկրոմիջավայրն է, ինչին հաճախ դիմում են ազատվածները, սակայն այստեղ խնդիրները ևս

բազմազան են, որոնք հանգում են հետևյալին՝ գործատուին գրավելու սոցիալական հմտությունների պակասին:

Այսպիսով, ինչ է հարկավոր որպեսզի գործատուն ընդունի անձին աշխատանքի.

- առնվազն աշխատանքի դիմելու տեխնիկական հմտություններ,
- գործատուին գտնելու հմտություններ,
- աշխատանք գտնելուց հետո այն կայուն պահելու հմտություններ:

Աշխատանք գտնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ՝ որքանով վստահելի և ներկայանալի է անձը: Այս խնդրի պատասխանը հետևյալն է՝ արդյոք պատրաստ և ունակ է նա սովորական աշխատանքային դիմում գրելու, և ռեզյումե կամ ինքնակենսագրություն ներկայացնելու: Արդյոք կարող է ինտերվյու անցնել, ինչպիսի հագուստով պետք է ներկայանալ գործատուին և այլն: Շատ պարզունակ հարցերն իրականում շատ կարևոր են առաջին իսկ հանդիպումից գործատուին գրավելու համար:

Այսպիսով, դրանց տիրապետումը հնարավոր է իրականացնել պատժից ազատման նախապատրաստման շրջանում հատկապես խմբային թրեյնինգների, դասընթացների և խորհրդատվությունների միջոցով:

ՔԿ հիմնարկում շատ կիրառելի է այս իմաստով դերային խաղը հատկապես գործատու և նախկին դատապարտյալ դերերի կիրառմամբ: Նշված մեթոդը կարելի է կիրառել հետևյալ կերպ. 8-10 դատապարտյալների շրջանում ընտրվում են երկու անձ և խաղարկվում է հետևյալ իրավիճակը. ազատվածը դիմում է գործատուին աշխատանք գտնելու խնդրանքով, ապա իրականացվում է «ուղեղների գրոն»։ ինչ հարցեր կտա գործատուն, որոնք են ընդունելի պատասխանները: **Օրինակ՝ գործատուն կարող է իմանալ դատվածության մասին** և պարզապես հարցնել. «Իսկ ինչպես վստահեմ Ձեզ՝ աշխատելու որպես առաքիչ», ինչպես պետք է համոզել նրան, որ Ձեր նախկին դատվածության գործոնը չի ազդի ներկա աշխատանքի վրա: Հնարավոր է, որ գործատուն չգիտի Ձեր՝ դատապարտված լինելու վերաբերյալ և տա հետևյալ հարցը. «վերջին երեք տարում դուք որտեղ եք աշխատել»: Սա իսկապես շատ դիլլեմիկ հարց է. արդյոք Դուք պետք է ասեք, որ եղել եք դատապարտված, թե ոչ: Գործող

օրենսդրությամբ դատվածությունը կարող է ազդել միայն քաղաքացիական և զինվորական պաշտոններ զբաղեցնելու դեպքում՝ այսինքն արգելել նման ոլորտներում աշխատելը: Մյուս աշխատանքների վերաբերյալ չկա որևէ սահմանակում, եթե դատապարտյալը չունի նաև որոշակի պաշտոնների զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելող լրացուցիչ պատիժ: Այսպիսով, նախկին դատապարտյալը իսկապես ազատ է այն հարցում՝ ասել, որ վերջին երեք տարում եղել է դատապարտված. թե խուսանավել՝ հաշվի առնելով, որ գործատուն միանգամից կիրաժարվի իրեն աշխատանքի վերցնել: Սա իսկապես շատ անհատական որոշում պետք է լինի: Գրքույկի վերջում տրված են ձևանմուշներ և ուղեցույցներ, որոնք կօգնեն ինչպես հիմնարկի անձնակազմին իրականացնելու սոցիալական հմտությունների դասընթացներ դատապարտյալների շրջանում, այնպես էլ նախկին դատապարտյալներին՝ կողմնորոշվելու վերը նշված հարցերի օպտիմալ լուծման համար:

Հատկապես երիտասարդ դատապարտյալների համար **կրթությունը կարևոր միջոց է** ազատումից հետո որոշակի մասնագիտական հմտություններ ձեռք բերելու համար: Այդ նպատակով ցանկալի է, որ դեռևս ՔԿ հիմնարկում գտնվելու ընթացքում դատապարտյալները հնարավորություն ունենան ընտրելու իրենց նախընտրած ուսումնական հաստատությունը, և որոշակի տեղեկություններ ստանան այնտեղ ուսանելու պայմանների վերաբերյալ: Ցանկալի է, որ նրանց տրվի ՀՀ-ում գործող ուսումնական հաստատությունների ցանկ, միաժամանակ խորհրդատվությունների ընթացքում ևս անդրադարձ լինի խնդրին:

Ազատումից հետո **բնակարանի ապահովման խնդիրը** ևս ամբողջությամբ լուծված չէ: Հստակ և կարգավորված չէ ոստիկանության մարմինների դերը և ընդհանրապես արդյոք նրանք որևէ սահմանված գործառույթ ունեն և ինչ դերակատարություն պետք է ունենան սոցիալական վերականգնման գործընթացում: Այս առումով թերևս իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն կա: Ելնելով դրանից, կարևորում ենք, որ պետությունը, հասարակական կազմակերպությունները խնդիրը դիտարկեն համակարգային մոտեցմամբ և փորձեն գտնել որոշակի լուծումներ

(ստեղծվեն հանրակացարաններ, անօթևանների ժամանակավոր կացության վայրեր, վերականգնողական կենտրոններ և այլն):

Ազատումից հետո **ընտանեկան խնդիրների կարգավորումը** շատ կարևոր է: Այս առումով շատ ավելի արդյունավետ կլինի անհատական խորհրդատվությունը, քանի որ ազգային մտածողությունից ելնելով նախընտրելի է դատապարտյալի հետ առանձին քննարկել նրա խնդիրները: Մակայն անհրաժեշտ է նաև ընտանեկան խորհրդատվություն ազատումից հետո: Մեր կատարած տնայցերը իսկապես վկայում են, որ դատապարտյալների մի մասն ազատումից հետո նախնական շրջանում հյուր են գգում իրենց իսկ տանը: Այս առումով ներկայացվում են հիմնական կողմնորոշումներ, որոնք կօգնեն նախկին դատապարտյալին հաղթահարել նախնական անվստահությունը.

1. փորձեք մտաբերել և վերհիշել ընտանեկան միաջավայրի այն դրական փորձառությունը, որ ունեցել եք մինչ դատապարտվելը

2. երբեք մի մտաբերեք, առավել ևս մի դատապարտեք Ձեր հարազատներին, թե նրանք ինչու չեն եկել տեսակցության, կամ քիչ են եկել, չէ որ դա պահանջում է ֆինանսական, ժամանակային ռեսուրսներ, որը նրանք միգուցե չեն ունեցել

3. մի կենտրոնացեք սխալների վրա, այլ գտեք այն դրականն ու ընդհանուրը, որը միավորում է Ձեզ

4. քննարկեք Ձեր խնդիրները, սակայն հանգիստ միջավայրում, մի առանձնացեք և մեկուսացեք բոլորից

5. միգուցե Դուք սպասում էիք առավել ջերմ հանդիպում, քան ստացվեց: Մի հանդիմանեք Ձեզ և հարազատներին, Դուք ժամանակ ունեք արտահայտելու Ձեր ջերմ վերաբերմունքը

6. մի թաքցրեք Ձեր մտավախություններն ու խնդիրները. քննարկեք դրանց լուծման ուղիները:

Փոքր համայնքներում նախկին ազատագրկվածները կարող են նաև հանդիպել բակի, համայնքի անվստահությանը կամ չափից ավելի հետաքրքասիրությանը, կամ հակառակը՝ զգուշավորությանը: Այսպիսի միջավայրում հասարակական կարծիքը մեծ նշանակություն ունի և գործող կարծրատիպերը կարող են իրապես նախկին ազատագրկվածի ինտեգրման խոչընդոտ դառնալ: Ցանկալի է, որպեսզի համայնքի ներգրավման գործընթացին որպես համագործակցության առանձին օղակ ներգրավվեն նաև տարածքային սոցիալական ծառայութ-

յունները, որոնք գործում են բոլոր համայնքներում: Կարևոր է մասնագիտական մոտեցմամբ և հատկապես հոգեբանական աջակցության ապահովմամբ նախկին ազատագրկվածներին աստիճանաբար ընդգրկել համայնքին, այլ ոչ թե վանել կամ հեռու մնալ: Այդ նպատակով կարևոր են նաև համայնքներում տեղեկատվական աշխատանքները, ակցիաները, համատեղ հասարակական միջոցառումները, շաբաթօրյակները և այլն:

Ընդհանուր առմամբ հետազատման խնդիրների լուծման համար լավագույն տարբերակը կլինի այս ոլորտում առկա հասարակական կազմակերպությունների գործունեության հիմքի վրա հետ- խնամքի մասնագիտացված ծառայությունների ձևավորումը և զարգացումը, որն իր հետ կրերի նաև խնդրի նկատմամբ մոտեցումների փոփոխության և նախկին դատապարտյալների նկատմամբ առավել հանդուրժողական վերաբերմունքի:

ԳԼՈՒԽ III
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԶԱՏՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ

Պատժից ազատման փուլի հոգեբանական յուրահատկությունները

Նախկին դատապարտյալների վերասոցիալականացման ամփոփիչ և առավել պատասխանատու փուլը նրա՝ ազատ կյանքի պայմաններին հարմարվելուն ուղղված հոգեբանական աշխատանքներն են: Որպես կանոն, այդ պայմաններին հարմարվելն ընթանում է նոր, երբեմն դժվարին կենցաղային բարդությունների, հին սոցիալական կապերի խզման, բնակարան (կացարան) չունենալու, աշխատանքի տեղավորման հետ կապված բարդությունների պայմաններում: Դատապարտյալների ռեադապտացիան բարդ և բազմամակարդակ գործընթաց է: Այն կապված է նրանց՝ հասարակության մեջ կյանքի բարոյական, հոգեբանական և գործնական պատրաստականության, նոր սոցիալական դերերի յուրացման, օգտակար կապերի ստեղծման, ազնիվ, օրինական, բարոյական, ճշմարիտ հունով շարժվելուն խոչընդոտող բացասական գործոնների վերացման կամ չեզոքացման հետ: Այս գործընթացից գերծ չեն մնում նաև հարցերը՝ կապված այնպիսի հոգեբանական գործոնների և առանձնահատկությունների հետ, ինչպիսիք են դատապարտյալների ազրեսիվությունը, տագնապայնությունը, կոնֆլիկտայնությունը, ինքնազնահատականի, արժեքային համակարգի, աշխարհայացքի փոփոխությունները, դիրքորոշումները, պահանջունքները: Նման փոփոխությունների, ինչպես նաև ազրեսիվության, տագնապայնության և ազրեսիվ միջանձնային հարաբերությունների ցուցանիշների սրվածությունը հաճախ կապվում է հասարակության մեջ ռեադապտացվելու խոչընդոտների հետ: Մեր կողմից իրականացված մասնագիտական աշխատանքը կառուցված է եղել այն սկզբունքի վրա, որ պատիժը կրելուց հետո հասարակության մեջ ռեդապտացիայի հիմնական նախադրյալը ազատագրվման ժամանակահատվածում դատապարտյալների հոգեբանական պատրաստականությունն ապահովելն է ռեդապտացիային, որն իր հերթին ենթադրում է հոգեբանական և անձնային որակների համապատասխան փոփոխությունների կատարման անհրաժեշտություն:

Նախքան ազատամանն անմիջականորեն նախորդող փուլում գտնվող դատապարտյալների հոգեբանական առանձնահատկություններին անդրադառնալը, անհրաժեշտ ենք համարում հակիրճ ներկայացնել դրան նախորդող փուլերի հոգեբանական նկարագիրը, քանի որ սրանք գտնվում են օրգանական միասնության մեջ և էապես ազդում են միմյանց վրա:

Հոգեբանական տեսանկյունից ազատագրվման պայմաններին դատապարտյալների հարմարվելը լինում է համարժեք (ադեկվատ) կամ անհամարժեք (ոչ ադեկվատ) տարբեր ձևափոխություններով: Համարժեք հակազդման հիմնական հատկանիշներն են հանդիսանում՝ դատապարտյալի վարքի համապատասխանությունը այն տեղեկատվությանը, որը կապված է ազատագրվման պայմանների հետ, վարչակազմի կողմից պահանջվող կանոնակարգի պահպանումը, սեփական հույզերի և վարքի վերահսկողության կարողությունը: Ոչ համարժեք հակազդման համար բնութագրական է հոգեախտաբանական տարրերի դրսևորումներ այն անձանց մոտ, ովքեր մինչև դատապարտվելը համարվել են հոգեպես առողջ :

Նորմալ հակազդումը՝ համարժեքության բարձրացված աստիճանով, բնութագրվում է դատապարտյալի ուշադրության կենտրոնացմամբ սոցիալական մեկուսացման փաստի վրա, կյանքի հեռանկարների իրական գնահատմամբ, օրինական ճանապարհով հիմնարկում սոցիալական կարգավիճակը բարելավելու ձգտումով: Այսպիսի դատապարտյալներն ընկերներ են գտնում այն անձանց շրջանում, ովքեր ցանկանում են ուղղվել և այդ աշխատանքների նկատմամբ ունեն դրական վերաբերմունք, ընդունում են իրենց մեղքը: Միջին համարժեքության աստիճանով նորմալ հակազդման ժամանակ դատապարտյալները բացասաբար են վերաբերվում սոցիալական մեկուսացման փաստին, բավարար ճշգրտությամբ են գնահատում իրենց դիրքը, հնարավոր հեռանկարները, մասնակիորեն կամ լրիվ ընդունում են իրենց մեղքը, տրամադրությունը արագ է կայունանում, և հիմնարկի կյանք մտնում են առանց խոր հոգեբանական տրավմաների :

Համարժեքության ցածր աստիճանով նորմալ հակազդման պայմաններում դատապարտյալները բավարար քննադատությամբ չեն մոտենում մեկուսացման վայրին: Այս փաստը հետագա կյանքի համար բացասաբար չեն գնահատում: Այսպիսի անձինք ձգտում են

ապրել «այսօրվա կյանքով»: Լինում են նաև անձինք, ում համար հիմնարկը դարձել է «սիրելի տուն» և ներքին կանոնակարգի պայմանները նորություն չեն հանդիսանում: Ոչ համարժեք հակազդումները բնութագրվում են դատապարտյալների վարքի «խանգարմամբ», որոնք, սակայն, մինչև դատապարտվելը նման խնդիր չեն ունեցել: Դա առաջին հերթին, վերաբերվում է տարբեր վախերի առաջացմանը: Հաճախակի առաջանում են տարբեր ֆոբիաներ: Խցում գտնվելու պայմաններում այս անձինք ցուցաբերում են չափազանց բարձր աստիճանի հասնող շարժողական անհանգստություն՝ բարձր շարժողական ակտիվություն: Տազնապային-դեպրեսիվ ռեակցիան բնութագրվում է տրամադրության կտրուկ անկմամբ, անհանգստության զգացումով, կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ հոռետեսությամբ և այլն: Այսպիսի դատապարտյալները ցուցաբերում են տազնապալիության բարձր աստիճան, անհանգստություն՝ թողած ընտանիքի նկատմամբ, կիսատ թողած գործերի վերաբերյալ: Հաճախ տառապում են անքնության, քնի տարբեր խանգարումներով, սրտանոթային համակարգի խանգարումներով: Նեգատիվ-դեպրեսիվ ռեակցիան բնութագրվում է վերը թվարկված բոլոր հատկություններով, որը զուգակցվում է մեկուսացման փաստի վերաբերյալ ներքին բացասական վերաբերմունքով, իրեն մեղավոր չճանաչելով, կարգապահական խախտումների առկայությամբ, ապաթիայով, ուղղման դիրքորոշման բացակայությամբ: Նեգատիվ-հիպոթերիկ ռեակցիան դրսևորվում է բացասական դեմոնստրատիվ վարքով, ուշադրության արժանանալու ձգտմամբ՝ որպես անարդարացի դատապարտվածի: Նրանց հիմնականում բնութագրական է էզոցենտրիզմը, իրենց կողմից կատարված հանցագործության արդարացմամբ հեղինակության հասնելը, թույլերին ենթարկեցնելը:

Դատապարտյալների հոգեվիճակները շատ դինամիկ են: Պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորության դեպքում նվազում է ապաթիան, բացասական վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Սակայն կան դատապարտյալներ, որոնց համակում է հուսահատությունը, երևակայության որոշակի խանգարումները, ֆիքսված մտքերը :

Համեմատաբար պատասխանատու փուլ է նախնական հարմարումը, երբ դատապարտյալը բախվում է նախկին կյանքից արմատապես տարբերվող պայմաններին, նոր պահանջներին

հարմարվելու խնդրին: Նախնական փուլը սկսվում է ընդհանուր ուղղվածությամբ, երբ ուղղիչ հիմնարկ տեղափոխված դատապարտյալը ծանոթանում է տեղի պայմաններին, համեմատում է իրական իրավիճակը և կալանավորներին պահելու վայրում ունեցած նախկին տեղեկություններն այդ ամենի մասին:

Ընդհանուր ուղղվածությունը դատապարտյալի որոշակի վերաբերմունքի ձևավորման նախապայման է կանոնակարգի, վարչակազմի աշխատողների նկատմամբ: Մոտավորապես 5-6 ամիս անց սկսվում է երկրորդ փուլը, երբ ձևավորվում են դատապարտյալների անձնային հակագրումները սոցիալական մեկուսացման փաստի վերաբերյալ: Դատապարտյալները ձեռք են բերում կայուն «ազատությունից զրկվածի ախտանիշների համակցության սինդրոմ» որը նրանց դարձնում է իրար նման: Այդ նմանությունը դրսևորվում է քայլվածքում, դիմախաղում, ժեստերում, վարչակազմի աշխատանքների նկատմամբ վերաբերմունքում և այլն :

Ազատման նախապատրաստման ժամանակահատվածին նախորդող փուլերի համառոտ նկարագրից հետո կարելի է անցնել բուն ազատման նախապատրաստման փուլին:

Հարմարվելու առավել բարդ և լարված փուլ է ազատման նախապատրաստման ժամանակահատվածը: Ազատման սպասումները հաճախ լինում են շատ ծանր, ինչը կապված է ազատության մեջ նրանց սպասող դժվարությունների (միջանձնային հաղորդակցումը, շփման առանձնահատկությունները միջավայրում, ընտանիքում, աշխատանքի վայրում և այլն) հետ: Այս պատճառով հնարավոր են ագրեսիվության, բարձր զրգովածության և այլ հոգեվիճակների դրսևորումներ:

Դատապարտյալների մոտ բացասական հոգեվիճակները կարող են պարբերաբար զարգանալ՝ կապված առկա ներքին կոնֆլիկտների, ներքին դրդապատճառների, հետաքրքրությունների, խթանների (ստիմուլների) տարաձայնությունների հետ: Ստերեոտիպերի, պահանջմունքների, հետաքրքրությունների փոփոխությունները տեղի են ունենում դատապարտյալի մտածողության գործունեության միջոցով, ինչը, առաջացնելով հակադրվող հարաբերություններ, հաճախ անդրադառնում է նրա հոգեվիճակների վրա: Քրեակատարողական հիմնարկներում գտնվելու հանգամանքը, ռեժիմի առկայությունը, ստերեոտիպերի փոփոխությունները, պա-

հանջմունքների կտրուկ սահմանափակումները և փոփոխությունները մեծապես անդրադառնում են դատապարտյալների բացասական հոգեվիճակների առաջացման վրա: Այդ հոգեվիճակները և ապրումները հաճախ ունենում են տարբեր ուղղվածություններ: Առանձին դատապարտյալների մոտ գերակշռում է անցյալի վերաբերյալ ապրումները, երկրորդ խմբի դատապարտյալների մոտ՝ ապագայի, իսկ երրորդների մոտ էլ՝ ներկայի:

Առաջին խումբը տրվում է հիշողություններին, ֆիքսվում է նախկինում ունեցած ապրումների վրա, առավել դժվարությամբ է հարմարվում և համակերպվում նոր պայմաններին:

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգերին, առկա կենսակերպին նշանակալիորեն հեշտ են հարմարվում երկրորդ և երրորդ խմբում ընդգրկված դատապարտյալները: Երբ սկսվում են գերակայել ապագային ուղղված ապրումները, երբ դատապարտյալները փորձում են մտովի կառուցել իրենց կյանքը ազատվելուց հետո, հիմնարկի ներքին կանոնակարգերը առավել թեթև և հեշտ հաղթահարելի են թվում, քանի որ պատժի կրման ժամանակահատվածն այդ դատապարտյալները գնահատում են որպես ժամանակավոր երևույթ:

Պատժից ազատվող դատապարտյալների հետ հոգեբանական աշխատանքների առանձնահատկությունները

Ուղղիչ բնույթի հոգեբանական աշխատանքների ընթացքում հոգեբանները հաճախ հանդիպում են առաջնային բացասական վերաբերմունքի: Չափահաս անձի աշխարհայացքի, կենսակերպի փոփոխմանն ուղղված բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում, առավելապես այն դեպքերում, երբ քարացած են անձի դիրքորոշումները և գիտակցությունն իներտ է:

Հաճախ դատապարտյալների թշնամանքն առաջանում է այն հանգամանքից, որ պատիժն ընկալում են որպես վրեժխնդրություն իրենց նկատմամբ, ինչը հանգեցնում է տարբեր տիպի ներազդման միջոցների նկատմամբ բացասական վերաբերմունքի: Ինչպես իրավացիորեն նշում են ոլորտի բազում տեսաբաններ ու պրակտիկներ՝ պատժի ուղղման նպատակը կիրականացվի միայն այն դեպքում, երբ

պատիժը ոչ թե «կոտրի» դատապարտյալի կամքը, այլ նպաստի վերջինիս ուղղվածության փոփոխությանը:

Դատապարտված անձի սոցիալ-հոգեբանական թերությունները (դեֆեկտները) առավելապես արտահայտվում են աշխատանքի նկատմամբ բացասական վերաբերմունքով: Սակայն, ուղղիչ բնույթի աշխատանքները քրեակատարողական հիմնարկներում արդյունավետ կարող են լինել միայն այն դեպքում, երբ դատապարտյալների մեջ առաջանա աշխատանքի նկատմամբ պահանջմունք: Դատապարտյալը պետք է տեսնի իր աշխատանքի արդյունքը և գնահատի այն: Այս հանգամանքը նպաստում է, որպեսզի դատապարտյալները գիտակցեն հասարակության վերաբերմունքն աշխատանքին, գիտակցեն հասարակական նորմերը և առավել հեշտությամբ վերաինտեգրվեն հասարակության մեջ:

Հոգեբանական նախապատրաստության ժամանակ դատապարտյալը ստանում է երկու տիպի ինֆորմացիա՝ անմիջական և միջնորդավորված: Ինֆորմացիայի փոխանցման անմիջական ձևերից են հոգեթերապևտիկ գրույցները և հակահասարակական արարքների վերլուծությունը: Հոգեբանական ազդեցությունը կոչվում է միջնորդավորված, երբ հոգեպրոֆիլակտիկ գրույցի ժամանակ դատապարտյալը մտածում է իր վարքի մասին՝ այս կամ այն իրավիճակի ժամանակ, որը սակայն հիմնված է ուրիշների փորձի վրա:

Համարվում է, որ կյանքի նոր պայմաններին դատապարտյալի հարմարվելու հաջողությունը կախված է երեք խումբ գործոններից:

Առաջին խմբի մեջ մտնում են ազատվողի անձը, նրա աշխարհայացքը, բնավորության գծերը, խառնվածքը, ինտելեկտը, իրավագիտակցությունը, աշխատանքային հմտությունները և այլն:

Երկրորդ խմբին մեջ են մտնում ազատվող դատապարտյալին շրջապատող արտաքին աշխարհի պայմանները՝ ապաստարանի առկայությունը, գրանցումը, ընտանիքը, աշխատանքի առկայությունը:

Երրորդ խմբին վերաբերվում են այն պայմանները, որտեղ դատապարտյալը եղել է պատժի կրման ժամանակ, և որոնք մեծ ազդեցություն են ունենալու ազատության մեջ գտնվելու առաջիկա մի քանի ամսվա ընթացքում՝ աշխատանքային գործընթացի կազմակերպում, դատապարտյալների կոլեկտիվի կառուցվածք, ուսուցում, անձնակազմի դրական ազդեցություն:

Ուղղիչ հիմնարկից ազատվածի հարմարումն ավարտվում է 1-3 տարվա ընթացքում: Հարմարման ամենաբարդ ժամանակահատվածը համարվում է սկզբի 3-6 ամիսը: Հենց այս ժամանակահատվածում են կատարվում առավել ինտենսիվ աշխատանքներ՝ ուղղված դատապարտյալի սոցիալական ադապտացմանը: Եթե ազատվածները չեն ընդունվում աշխատանքի կամ ընդունվելուց հետո թողնում են այն, չեն ունենում բնակության մշտական վայր, խախտում են հասարակական կարգը, այս ամենը խոսում է այն մասին, որ սոցիալական ադապտացման գործընթացն ընթանում է անբավարար կերպով և բոլոր հիմքերը կան կրկնահանցագործությունների համար: Սոցիալական հարմարումը համարվում է հաջողված, երբ ազատված դատապարտյալի հասարակական օգտակար դրական կապերը ձևավորված են և պահպանված, ինչպես նաև չունեն էական շեղումներ: Նորմալ ադապտացված դատապարտյալը խզում է բոլոր կապերը միջավայրի հետ և այն անձանց հետ, որոնց վարքը բնութագրվում է որպես հակահասարակական:

Հոգեբանական պատրաստականությունը ազատմանը նախապատրաստվող դատապարտյալների համար պայմանավորված է ինչպես ուղղիչ հիմնարկի կյանքի, այնպես էլ՝ ազատության մեջ գտնվելու կյանքի արմատական տարբերություններով: Հոգեբանական պատրաստականության համար հիմք հանդիսացող հիմնական ուղղություններն են՝ աշխատանքի տեղավորումը, ընտանեկան կյանքի բարելավումը, ինքնադաստիարակման, սովորության և ցանկության ակտիվացումը: Ազատությանը նախապատրաստելու ժամանակ կարևոր տեղ է գրավում արժեքների, նպատակների, ցանկությունների համակարգի ձևավորումը:

Ազատմանն ուղղված հոգեբանական նախապատրաստության անհրաժեշտ պայման է հանդիսանում դատապարտյալի ինքնագնահատականը և հավակնությունների մակարդակի փոփոխությունները: Ազատումից 2-3 ամիս առաջ սկսվում է հոգեբանական անմիջական նախապատրաստումը, որն ավարտվում է վերջին օրը՝ դատապարտյալի հետ ունեցած անհատական զրույցով: Անմիջական նախապատրաստման շրջանում կարևոր է կապվել տեղի ինքնակառավարման մարմինների հետ, գտնել աշխատանք, հոգ տանել նրա կենցաղային պայմանների մասին:

Այսպիսով, վերլուծելով և ամփոփելով հանցագործ անձի և հանցավորության հոգեբանական առանձնահատկությունները, դատապարտյալների՝ պատժի կրման պայմաններին հարմարման, ինչպես նաև ազատման նախապատրաստման հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ առկա մտեցումները, մենք հանգում ենք այն եզրակացության, որ չնայած հանցավորությունը և հանցագործ անձի ձևավորումն ունեն խոր արմատներ (մինչև դեռահասության և մանկության տարիներից ձևավորված նախադրյալներ, ընտանեկան հարաբերություններում բացթողումներ և այլն), այնուամենայնիվ, բազմաթիվ երկրներում փորձեր են կատարվում նպաստել հանցագործություն կատարած և դատապարտված անձի ուղղմանը և վերականգնմանը: Այս գործողությունների համար առաջնային դեր է կատարում նպատակաուղղված հոգեբանական միջամտությունների իրականացումը:

Առավել պատասխանատու և կարևորագույն փուլ է պատժից ազատման նախապատրաստվող դատապարտյալների հոգեբանական պատրաստականության ապահովումը՝ ապրել նոր պայմաններում և վերաինտեգրվել հասարակությունում՝ որպես նրա լիիրավ անդամներ: Դատապարտյալների այսպիսի նախապատրաստումը կայանում է նրանում, որ տարվում է նպատակային աշխատանք՝ ուղղված հոգեկանի ակտիվացմանը, սոցիալապես ընդունելի սովորույթների, վերաբերմունքների ձևավորմանը: Այսպիսի նպատակաուղղված հոգեբանական ազդեցությունների շնորհիվ դատապարտյալի մեջ ձևավորվում է հոգեբանական պատրաստականություն՝ ապրել նոր պայմաններում, ներգրավվել տարբեր սոցիալական խմբերում:

Կյանքի նոր պայմաններին հարմարվելու արդյունավետությունը կախված է ինչպես ազատվողի անձի, նրա աշխարհայացքի, բնավորության գծերի, խառնվածքի, ինտելեկտի, իրավագիտակցության, աշխատանքային հմտությունների առկայությունից և առանձնահատկություններից, այնպես էլ ազատվող դատապարտյալին շրջապատող արտաքին աշխարհի պայմաններից: Հատկապես այն պայմաններից, որտեղ դատապարտյալը եղել է պատժի կրման ընթացքում, և որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ ազատության մեջ գտնվելու ընթացքում: Պատժից ազատված անձի գործունեության լարվածությունը պայմանավորված է նաև նրանով, որ նա պետք է կարողանա

կառավարել ոչ միայն իր գործողությունները, այլև հասարակական կարծիքը սեփական անձի նկատմամբ: Բնականաբար այստեղից հետևում է, որ տվյալ անձը պետք է օժտված լինի այնպիսի կայուն անձնային առանձնահատկություններով, որոնք անհրաժեշտ են ցանկացած իրավիճակում գործելու պատրաստականության համար: Ծրագրի իրականացման ընթացքը ցույց տվեց, որ ռեադապտացիային նախապատրաստվող դատապարտյալների մոտ պատրաստականության ձևավորումը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե նա ինչպես է կատարում ռեսուրսային պահանջները, ինչպես է իրեն դրսևորում դատապարտյալների միջավայրում, ինչ վերաբերումն է ունի ուղղիչ ներգործությունների նկատմամբ և այլն: Այսինքն, անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե ռեսուրսային-զբաղմունքային ընթացքում դատապարտյալների հետ կատարված փոփոխությունները կարող են արդյոք նպաստել նրանց ռեադապտացիային և դրա նկատմամբ պատրաստականությանը:

Ռեսուրսային ջանքերը պարզելու համար, մենք կազմել ենք թեստանման հարցարան՝ հավանական պատասխանների տարբերակներով: Շահառուները (մոտ 50 դատապարտյալներ) պատասխանել են հետևյալ հարցերին. 1) Ինչպես եք հարմարվել քրեակատարողական հիմնարկի պայմաններին, 2) Ինչպես եք պատկերացնում հարմարումը հասարակության մեջ, 3) Կարող եք վստահաբար ասել, որ քրեակատարողական հիմնարկում նորից հանցանք չեք կատարի, 4) Ձեր կարծիքով, ինչպես է մարդը կրկնահանցագործ դառնում: Ստացված պատասխանները համադրվել են այլ հոգեբանական մեթոդների կիրառումից ստացված տվյալների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի սոցիալական աշխատող, հոգեբան և այլ ծառայողների կողմից տրված բնութագրերի հետ (հարցարանը ներկայացված է հավելված 6-ում):

Այսպիսով, վերլուծելով և ամփոփելով հանցագործ անձի և հանցավորության հոգեբանական առանձնահատկությունները, դատապարտյալների՝ պատժի կրման պայմաններին հարմարման, պատժից ազատման նախապատրաստման ժամանակահատվածի, ինչպես նաև հոգեբանական պատրաստականության վերաբերյալ առկա տեսական և փորձարարական մոտեցումները՝ մենք կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Քրեակատարողական հիմնարկներում գտնվելու հանգամանքը բացասաբար է անդրադառնում անձի վրա, հաճախ նպաստում նաև անձի կտրուկ հետաճին՝ ընդհուպ մինչև պաթոլոգիկ դրսևորումներ: Այդ պատճառով, քրեակատարողական հիմնարկների առջև դրված խնդիրների շարքում առանձնակի տեղ պետք է գրավի նաև դատապարտյալի անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը, համապատասխան հոգեբանական միջամտությունների կիրառումը, օգտակար զբաղվածության, կրթության, աշխատանքով ապահովումը և այլն:

2. Դատապարտյալների հետ իրականցվող համալիր աշխատանքներում, քրեակատարողական հիմնարկներում առաջնային խնդիրներից մեկը պատժի կրման պայմաններին դատապարտյալների հոգեբանական հարմարման ապահովման գործընթացն է: Այն իր մեջ ներառում է ինչպես իրավաբանական խորհրդատվություններ, քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, այնպես էլ սոցիալական և հոգեբանական խարհրդատվության, հոգեբանական դիմանկարի կազմման, հոգեճանաչման (փսիխոդիագնոստիկ) և այլ սոցիալական, հոգեբանական համալիր աշխատանքների, մեթոդների և միջամտությունների իրականացում: Նման նպատակաուղղված մասնագիտական աշխատանքները նպաստում են նաև մասնագետ (տվյալ դեպքում հոգեբան)-դատապարտյալ հարաբերություններում հոգեբանական պատնեշի հաղթահարմանը, որն էլ իր հերթին կարող է նպաստել դատապարտյալների ուղղման գործընթացին:

3. Դատապարտյալների ուղղումը բարդ և պատասխանատու գործընթաց է, քրեակատարողական ծառայության հիմնական կարևորագույն խնդիրը: Դատապարտյալների ուղղումն անմիջականորեն կապված է նրանց հետագա ռեադապտացման խնդրի արդյունավետ լուծման հետ: Այս առումով, առավել պատասխանատու և կարևորագույն փուլ է պատժից ազատման նախապատրաստվող դատապարտյալների հոգեբանական պատրաստականության ապահովումը՝ ապրել նոր պայմաններում և վերաինտեգրվել հասարակությունում՝ որպես նրա լիիրավ անդամներ: Դատապարտյալների այսպիսի նախապատրաստումը կայանում է նրանում, որ տարվում է նպատակային աշխատանք՝ ուղղված հոգեկանի ակտիվացմանը,

սոցիալապես ընդունելի սովորույթների, վերաբերմունքների ձևավորմանը: Այսպիսի նպատակաուղղված հոգեկան ազդեցությունների շնորհիվ դատապարտյալի մոտ ձևավորվում է հոգեբանական պատրաստականություն՝ ապրել նոր պայմաններում, ներգրավվել տարբեր սոցիալական խմբերում:

Հասարակությունում նախկին դատապարտյալի ռեադապտացիայի արդյունավետությունը կախված է ինչպես ազատվողի անձի, նրա աշխարհայացքի, բնավորության գծերի, խառնվածքի, ինտելեկտի, իրավագիտակցության, աշխատանքային հմտությունների առկայությունից և առանձնահատկություններից, այլև ազատվող դատապարտյալին շրջապատող արտաքին աշխարհի պայմաններից, ինչպես նաև այն պայմաններից, որտեղ դատապարտյալը եղել է պատիժը կրելու ընթացքում, և որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ ազատության մեջ գտնվելու ընթացքում:

4. Ազատման նախապատրաստման ժամանակաշրջանն իրեն հատուկ հոգեբանական առանձնահատկություններով հաճախ համարվում է արտակարգ իրավիճակ ազատման նախապատրաստվող դատապարտյալների շրջանում: Ի դեպ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատման նախապատրաստման ժամանակահատվածն ընկալվում է որպես արտակարգ ոչ միայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացված, այլև պատժի լրիվ կրումով ազատվող դատապարտյալների շրջանում:

5. Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալներին բնորոշ է բարձր տագնապայնությունը, ագրեսիվությունը, կոնֆլիկտայնությունը: Այս առանձնահատկություններն առավել սրվում են պատժից ազատմանը նախորդող ժամանակահատվածում: Նման առանձնահատկությունների առկայությունն առավել արդիական է դարձնում ազատման նախապատրաստվող դատապարտյալների հոգեբանական պատրաստականության ապահովումն՝ ուղղված, հասարակությունում նախկին դատապարտյալի ռեադապտացմանը:

6. Դատապարտյալների ռեադապտացիային ուղղված հոգեբանական պատրաստականության ապահովման համար կարևոր են ագրեսիվության, տագնապայնության ագրեսիվ և ավտորիտար մի-

ջանձնային հարաբերությունների ցուցանիշների նվազեցումը, ինքնագնահատականի կարգավորումը, հումանիստական մոտեցման ձևավորումը, արժեքային կողմնորոշումները, աշխարհայացքը, դիրքորոշումները, դրդապատճառային համակարգի փոփոխությունները:

7. Արդյունավետ ռեադապտացիա ապահովելու համար անհրաժեշտ և քրեակատարողական հիմնարկներում կիրառելի են խմբային հոգեբանական աշխատանքները, որոնց պետք է նախորդեն և հաջորդեն վերը թվարկված որակների և առանձնահատկությունների վերաբերյալ թեստավորումն ու ռեթեստը:

Ըստ առաջնահերթությունների առաջարկություններ այս փուլում անձանց հոգեվիճակը ստաբիլացնելու ուղղությամբ

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում արված եզրակացություններից բխում են հետևյալ առաջարկությունները.

1. Ազատման նախապատրաստվող դատապարտյալների հետ տարվող հոգեբանական հատուկ աշխատանքները անհրաժեշտ է սկսել ազատվելուց 8-10 ամիս առաջ և ավարտել ազատման օրը՝ վերջնական գրույցով: Ընդ որում, վերջին գրույցի ժամանակ անհրաժեշտ է առավել ընդգծված կերպով ակտիվացնել դատապարտյալի դրական որակները, նրա կենսափորձում եղած սոցիալականորեն խրախուսելի դրվագները, շեշտել ազատության պայմաններում ինքնադրսևորման և առավել նշանակալի լինելու հնարավորության առավելությունները: Սա հնարավորություն կտա դատապարտյալների հետ տարվող հոգեբանական աշխատանքներում առավել շատ դեպքերում հաղթահարել դատապարտյալ-հոգեբան հարաբերություններում հանդիպող խոչընդոտը, բացառել շտապողականությունը և հոգեբանական պատրաստականության տեսանկյունից հասնել առավել շոշափելի արդյունքների:

2. Ազատման նախապատրաստվող դատապարտյալների հետ տարվող հոգեբանական աշխատանքները հնարավորության դեպքում գուցակցել նաև նրա ընտանիքի անդամների, մերձավոր հարազատների, մի խոսքով ռեֆերենտային խմբի անդամների հետ տարվող հոգեբանական աշխատանքների հետ: Սա առաջարկվում է ելնելով

այն դրույթից, որ արդյունավետ հոգեբանական ադապտացիան և ռեադապտացիան (վերահարմարում) իրենցից ներկայացնում են ոչ թե պասիվ- հարմարողական ակտերի ամբողջություն, այլ ակտիվ որոնողական գործունեության արդյունք: Այլ խոսքերով ասած՝ մարդն իրեն լիարժեք հարմարված է զգում այն ժամանակ, երբ մի կողմից ինքն է անձնային աճի միջոցով փոփոխություններ մտցնում սեփական վարքի մոդելների մեջ, հարմարվում նոր սոցիալ- հոգեբանական կենսապայմաններին, իսկ մյուս կողմից գիտակցում, հասկանում և զգում է, որ սոցիումի մյուս անդամները իրենց հերթին գոտեպնդում, խրախուսում և օժանդակում են իրեն, ըստ արժանվույն գնահատում իր ձեռնարկած ջանքերը:

3. Ազատման նախապատրաստվող դատապարտյալների հետ տարվող հոգեբանական աշխատանքներին զուգահեռ՝ վերջին մի քանի ամիսների ընթացքում առավել ինտենսիվ դարձնել օրենքով թույլատրելի ինֆորմացիայի հոսքը, որն իր մեջ արտացոլի ազատության պայմաններում տեղի ունեցող վերջին կարևոր փոփոխությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում: Այս առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հիմնականում ՔԿՀ-ներում դատապարտյալների կյանքն ու կենցաղը կրում է բավականին կոնսերվատիվ բնույթ, իսկ արժանահավատ տեղեկատվության դեֆիցիտը միշտ հանգեցնում է պտտվող լուրերի և ասեկոսեների տարածմանը, քանի որ առկա է որևէ երևույթի մասին չբավարարված տաղեկատվական պահանջմունք: Ինֆորմացիոն դեֆիցիտը հոգեբանական տեսանկյունից բավականին վտանգավոր երևույթ է, քանի որ կարող է հանգեցնել տազնապայմանության և հետևաբար ագրեսիվության աճի, ինչն էլ իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ ռեսուրսային զործընթացի էֆեկտիվության վրա:

4. Ազատման նախապատրաստվող դատապարտյալների հետ տարվող հոգեբանական աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել նաև նրանց իրավագիտակցության մակարդակի բարձրացման վրա: Վերջինս մի կողմից կարող է նպաստել ազատվելուց հետո հասարակությունում առավել արագ և էֆեկտիվ վերաինտեգրվելուն, մյուս կողմից որոշակի չափով կարող է գսպել ռեցիդիվի ռիսկը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

• Կարողացեք լսել ինքներդ Ձեզ, համոզված եղեք, իսկապե՞ս ուզում եք աշխատել նախկին մասնագիտությամբ, թե՞ ցանկանում եք գտնել նոր աշխատանք:

• Ձեզ համար հստակեցրեք. «Որտե՞ղ կցանկանայիք և կկարողանայիք աշխատել»:

• Հաշտվեք այն գաղափարի հետ, որ աշխատանք փնտրելը ծանր աշխատանք է:

Տեխնիկական

• Կազմեք ինքնակենսագրություն (ռեզյումե)
• անհրաժեշտության դեպքում հավաքեք երաշխավորագրեր
• ուսումնասիրեք թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվության բոլոր հնարավոր աղբյուրները

1. մարդիկ (ծանոթ, ընկեր, բարեկամ)

2. գովազդ, հայտարարություններ

3. ինտերնետային կայքեր

4. աշխատանքի տեղավորման պետական և մասնավոր գործակալություններ

5. դիմեք գործատուներին:

Աշխատեք օգտագործել աշխատանք փնտրելու հնարավոր բոլոր մեթոդները

• անձամբ գտնել գործատուին և դիմել նրան
• մամուլում տպագրված հայտարարությունների միջոցով
• հեռուստատեսությամբ, ռադիոյով հեռարձակվող գովազդների միջոցով

• դիմել բարեկամներին, ընկերներին

• դիմել զբաղվածության պետական ծառայություն

• դիմել աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալություններին

• տպագրել հայտարարություններ տեղական մամուլում:

Նույնիսկ, եթե դժվարանում եք այս աշխատանքների ճանապարհին, հոգ չէ. դիմե՛ք և մասնակցե՛ք զբաղվածության կենտրոն-

ներում գործող աշխատանքի ակումբների աշխատանքներին, որտեղ հմուտ մասնագետները կօգնեն և կաջակցեն.

- Ինչպես պատրաստել ինքնակենսագրություն (ռեզյումե)
- Ինչպես գրել ուղղորդող նամակ գործատուին
- Ինչպես պատրաստվել հարցազրույցի
- Ինչպես նաև նմանատիպ այլ հարցերում:

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի ակումբները գործում են հետևյալ բնակավայրերի զբաղվածության մարզային և տարածքային կենտրոններում

Բնակավայր	Հասցե	Հեռախոս
Երևան, Էրեբունի, Նուբարաշեն	Խորենացու 213	57-46-80
Վանաձոր	Գ. Նժդեհի 14	0322, 22059
Ալավերդի	Երևանյան խճ. 5	0253, 22701
Գյումրի	Մ.Մանուշյան 5/5	0312, 31405
Հրազդան	Կենտրոն, թիվ 6 մանկապարտեզ	0223, 21835
Չարենցավան	4-րդ թաղ., 18 շ.	0226, 42003
Գավառ	Գրիգոր Լուսավորչի 6	0264, 22882
Աբովյան	Բարեկամության 1	0222, 24459
Դիլիջան	Մյասնիկյան 66	0268, 23038
Բերդ	Լևոն-Բեկի 5	0267, 23417
Իջևան	Վասիլյան 2	0263, 31139
Գորիս	Մ.Մաշտոցի 3	0284, 21166

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ

Վաղը գործատուի հետ հարցազրույցի եք: Մտածեք ձեր կեցվածքի ու պահվածքի մասին: Ընտրեք համեմատաբար նոր և ձեր չափսով հագուստ: Համեմատաբար նոր է համարվում երկու տարուց ոչ շուտ գնված և տաս անգամից ոչ ավել հագած հագուստը: Հասկանալի է, որ տրամաբանական հարց կծագի՝ ինչու: Պատասխանը կլինի նույնքան տրամաբանական և պարզ. որովհետև հապշտապ գնած հագուստը ոնց որ պետքն է տնտղած չէք լինի ու հետո կպարզվի, որ ծալքերը ցից են կանգնում, թևատակերը ձգում են և, ընդհանրապես, ամեննին էլ հարմար չէ: Մանրուք է թվում, բայց հանդիպման ժամանակ ոչ ճիշտ ընտրված հագուստը կարող է լրջորեն նեղել ձեզ, կաշկանդել և դուք, փոխարենը ձեզ զգայիք ինչպես «ձուկը՝ ջրում», ոչնչով չփայլեցիք, այսինքն՝ չհաջողվեց արտահայտել անհրաժեշտ հմայք, տրամադրություն և սեփական ուժերի հանդեպ վստահություն: Գուլպաների, փողկապի կամ վզնոցի երանգները հարմարեցրեք կոստյումի գույնին, խուսափեք վառ և խոշոր նախշերից: Դեղին ու կարմիր երանգները, ինչպես նաև ճչան գունանախշերը ցանկալի չեն հարցազրույցի ժամանակ, եթե իհարկե մտադիր չեք շոու-բիզնեսով զբաղվել:

Ընդհանրապես, նախընտրելի է հարցազրույցի գնալ ձեր մակ վերնաշապիկով: Եթե նույնիսկ երբեք սպիտակ հագած չկաք ու չունեք, ձեր զգեստապահարանից ընտրեք մեղմ տոների ու առանց նախշերի որևէ վերնաշապիկ:

Փաստաթղթերը ցանկալի է ներկայացնել թղթապանակի մեջ՝ թաղանթաշապիկներում, ինչը թույլ կտա փաստաթղթերն արագ թերթել և ներկայացնել նրանց բովանդակությունը: Ո՛չ մի տրորված կամ կեղտաբծով էջ մեջտեղ չբերեք հանկարծ, բոլոր տեսակի թղթերը պետք է անթերի լինեն: Այս դեպքում գործատուն կեզրակնանացնի, որ նույն կոկիկությունը դուք կդրսևորեք նաև աշխատանքում: Չմոռանաք թաշկինակ վերցնել, այն էլ՝ մաքրամաքուր: Մեկ էլ տեսաք, այնպիսի հարցեր տվեցին, որ քրտնեցիք. ինչո՞վ եք մաքրելու ձեր ճակատին հայտնված կաթիլները, բացի այդ, ձեր մաքրասիրությունն ու կոկիկությունը ցուցադրելու ևս մի առիթ կունենաք:

Անթերի թեկնածուի (այսինքն՝ ձեր) կերպարը կարելի է ամբողջացնել թանկարժեք օժանելիքի թեթև բույրով, հիշե՛ք, թեթև, ընդ որում, հարցազրույցից մեկ-երկու ժամ առաջ ցանեք, որ հանդիպման ժամանակ ձեր օժանելիքի բույրը լինի հազիվ զգալի: Դրանով դուք որոշակի ձգողականություն կառաջացնեք ձեր հանդեպ:

Նախապես լավ քնեք եւ հանգստացեք: Մինչև հարցազրույցը մի ամբողջ օր մտքներովդ անգամ չանցկացնեք մածունից թունդ ըմպելիք խմել: Կարող եք հանգստացնող որևէ դեղամիջոց ընդունել, բայց՝ երեկոյան: Առավոտյան դուք պետք է թարմ ու առույզ լինեք:

Ձեզ կզանգահարեն: Շատ ցանկալի է, որպեսզի բջջայինի սպասագանգը լինի սովորական ազդանշան և ոչ թե որևէ զվարճալի երաժշտություն:

Չուշանա՛ք: Եթե հասցեն չգիտեք, նախօրոք պարզեք, կամ, եթե մոտավորապես գիտեք, սովորականից կես ժամ շուտ դուրս եկեք: Ընդհանրապես ազատ ժամանակ ունեցեք հանգիստ տեղ հասնելու և հանդիպումը ճանապարհին մտովի ծանրութեթև անելու համար, որպեսզի այնպես չլինի, որ վերջին րոպեին ձեզ ներս գցեք ու միանգամից էլ մերժվեք: Անգամ 3 րոպե ուշանալն է անթույլատրելի, եթե նույնիսկ ընթացքում կարողանաք տեղյակ պահել այդ մասին ու հազար անգամ ներողություն խնդրել: Ժամանակից շուտ էլ չգնաք, որ միջանցքներում անտեղի չհոգնեք: Ներկայացեք ճիշտ ժամանակին. լավ թեկնածուին թերացումներ չեն սագում, նա ամեն ինչ պետք է նախատեսած լինի: Ընդ որում՝ պատրաստ եղեք, որ նրանք ձեզ կարող է ժամերով սպասեցնեն դռան ետևում, վերջում էլ ընդամենը մի թռուցիկ ներողություն խնդրեն: Չնեղվե՛ք, ընդհակառակը, թող ձեր չխամրող ժպիտն արտահայտի բարյացակամություն և փորձառություն:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մովորական «Արդյոք հե՞շտ գտաք մեզ» հարցը կատակի տվեք կամ ուղղակի պատասխանեք՝ այո՛: Այդ հարցով շատ հեշտ կարելի է բացահայտել թեկնածուի «դանդալոշության» ու «բթամտության» աստիճանը: Եթե սկսեցիք դժգոհությամբ մանրակրկիտ պատմել խորամանկորեն քողարկված իրենց գրասենյակի որոնումների մասին, հույսներդ կտրեք, ձեր բանակցությունները հազիվ թե բարեհաջող ելք ունենան:

Եթե ձեզ ուղեկցել են աշխատասենյակ, բայց նստել չեն առաջարկել, ինքներդ ընտրեք ձեզ ամենահարմար տեղն ու հանգիստ նստեք: Եթե այոռոը ձեզանից հեռու է, առանց ընդգծելու խոսակցության ընթացքում մոտեցեք և ձեզ հարմար մի տեղ դրեք ու նստեք: Անկաշկանդ եղեք, ձեզ «կախաղան չեն հանելու», վատագույն դեպքում աշխատանքի չեն ընդունի, ոչի՛նչ, ուրիշ տեղ կփորձեք: Չխեղճանա՛ք:

Հնարավոր է, որ խնդրեն հարցաթերթիկ լրացնել: Հնարավոր է հարցաթերթիկը շատ երկար լինի, ասենք՝ 10-15 էջ: Ավելի լավ, հանգիստ, կշռադատված լրացրեք, ավելի հեշտ կլինի, քան եթե հարցաքննության նման պատասխաններ տայիք կամ դեմ առ դեմ գրուցեիք: Ինչ բնույթի հարցեր էլ լինեն, ճիշտ պատասխանեք, բայց... մինչև վերջ «սրտներդ չբացեք»:

- **Ինչու՞ արձագանքեցիք մեր հայտարարությանը:**

«Ուսումնասիրեցի շուկան, հասկացա, որ ավելին կարող եմ անել: Հարկավոր փորձը կա, արդեն որոշել եմ ինքս օգտակար լինել մյուսներին»: Այս թեմայով հանպատրաստից պատմություններ հյուսելու համար 3 րոպեն լիովին բավական է: Ընդհանրապես հակիրճ խոսեք:

- **Ի՞նչ աշխատանք էիք կատարում նախորդ աշխատավայրում:**

Այս հարցին վերացական պատասխան չտաք, նախօրոք մտածեք և հստակ ու կոնկրետ պատասխան տվեք:

Առաջին ժամադրության պես գեղարվեստորեն նկարագրեք ձեր «սխրանքները»: Ի դեպ, կարող եք ձեր ընկերուհու կամ ընկերոջ հետ նախապես փորձել այդ տեսարանը: Պատմեք ոգևորված, ուրախ, թող զգան ու տեսնեն, որ դուք սիրում եք ձեր աշխատանքը և կարողանում

եք գործից գլուխ հանել: Եթե գրավոր եք պատասխանելու, դարձյալ մի գլացեք, մանրամասն և ծավալուն գրել:

- **Ինչո՞վ կուզենայիք զբաղվել:**

Ճիշտն ասեք, մեկ էլ տեսաք այդ ընկերությունում հնարավոր եղավ իրականացնել ձեր երազանքը: Ապահովության համար, համեմայն դեպս, ավելացրեք նաև մենեջերի սովորական պարտավորությունները, որոնք դուք գոնե հաճույքով կկատարեք: Մինչ հարցազրույցը նախօրոք իմացեք, թե առաջարկվող աշխատատեղը զբաղեցնողը ինչ պարտավորություններ ունի և նմանատիպ աշխատանք ևս շարադրեք: Գործատուները շատ են սիրում դավադիր հարցեր տալ: Օրինակ՝ «Հիշեք ձեր ամենամեծ նվաճումը», կամ էլ՝ «Որո՞նք են ձեր թերությունները»:

Չընկրկե՛ք, չխուսափե՛ք: Պարզ հայացքով պատասխանեք, որ ձեր ամենամեծ արատը թերևս տքնաջան աշխատասիրությունն ու առողջարար սննդառեժիմի հանդեպ չափազանցված հակումն է: Հետո խոստովանեք, որ ծխարանում երկար մնալ ու աշխատակիցների հետ սրտաբաց զրույցների տրվել չեք սիրում:

«Ամենամեծ նվաճումների» շարքում առանց ամաչելու թվարկեք Ձեր կենցաղային ձեռքբերումները և այլն:

Իմացեք՝ ամենադավադիր հարցը հնչելու է միանգամայն անմեղ ու բնական, երբեմն ցրված, մտերմիկ տոնով, ի միջի այլոց:

Հարցազրույցները սովորաբար ավարտվում են «մենք Ձեզ կզանգահարենք ու կհայտնենք մեր որոշումը» տարածված ու ոչինչ չասող արտահայտությամբ: Փորձը ցույց է տալիս, որ եթե մեկ շաբաթվա ընթացքում չզանգեցին, էլ չեն զանգի, ուրեմն ձեզ ջնջել են ցուցակներից: Պատահում է նաև, որ ընտրված թեկնածուն վերջին պահին հրաժարվում է այդ աշխատատեղից և, չնայած գրեթե ամիս է անցել, հնարավոր է, որ կադրերով զբաղվող աշխատակիցը ձեզ որպես պահեստային թեկնածու աչքի տակ ունեցած լինի ու բախտը ձեզ ժպտա: Բայց նման իրավիճակները բացառություն են: Այնպես որ զինվեք մի քանի հասցեներով, ուր հրավիրում են աշխատանքի, և գնացեք այդ բոլոր հարցազրույցներին:

Եթե ձեզ չեն ընդունել աշխատանքի, զանգահարեք այն աշխատակցին, որը գրուցել է ձեզ հետ ու շատ քաղաքավարի հարցրեք, թե ինչու: Կադրեր ընտրող փորձառու մասնագետի բացատրությունները ձեզ կօգնեն հաջորդ անգամ նույն սխալները թույլ չտալ:

Աշխատավարձի չափը կախված է հիմնականում հետևյալ գործոններից.

1. շուկայի ոլորտից,

2. ընկերության տեղական կամ արտասահմանյան լինելուց:

Այսուհանդերձ տրամադրվեք, որ նույնիսկ առաջնակարգ ընկերությունում ձեզ կառաջարկեն 10%-ից ցածր գումար, քան շուկայական միջին աշխատավարձն է, և մի հուսահատվեք, եթե նվազագույնը տան: Հիմա արդեն սակարկելու ժամանակն է. Փորձառու մարդիկ կարողանում են առաջարկված գումարի չափը 10-50%-ով ավելացնել:

Եթե շատ քիչ գումար խնդրեք, կադրերի մասնագետի մտքով կարող է անցնել, որ դուք լավ չեք պատկերացնում աշխատանքի իրական պայմանները, ի վիճակի չեք տեղավորվելու աշխատաժամանակի մեջ, դուք ձեզ գնահատում եք ավելի ցածր և այդ գործի գիտակը չեք:

Եթե չափից շատ պահանջեք՝ շուկայական միջին մակարդակից երկու-երեք անգամ ավելի, գործատուն վատ կանխագագցում կունենա՝ մտածելով, որ դուք ազահ, եսակենտրոն, ինքներդ ձեզ գերազնահատող անձնավորություն եք: Հասկանալի է, որ իրականում նա կուզենա խնայողություն անել աշխատավարձի հաշվին՝ հույս ունենալով գտնել աշխատանքի շուկայի միջին վարձավճարից ավելի ցածր աշխատավարձով թեկնածու:

Դուք կարող եք ստանալ չնչին գումար, եթե չպայմանավորվեք կոնկրետ գումար և չպնդեք պայմանագիր կնքել, որտեղ ամեն ինչի հետ միասին նշվի նաև աշխատանքի ծավալը: Երբ գործատուն անորոշ ձևակերպումներով է խոսում, ինչպես օրինակ՝ «մենք ձեզ շատ կվճարենք», «այսպիսի պաշտոնում աշխատողը պիտի ամենաքիչը 1000 դոլար ստանա» կամ «սկզբում նվազագույնը կստանաք, իսկ եթե արժանի լինեք, աշխատավարձը կավելացնենք», հետո նա կարող է իր հայեցողությամբ մեկնաբանել գումարի չափը՝ հավատացնելով, որ ամսական 200 դոլարը արքայական շոայություն է:

Աշխատավարձի ստույգ չափն ու աշխատանքի ծավալը պարտադիր պնդեք, եթե պայմանագիր կնքեք, ըստ որի՝ ստանալու եք ոչ մեծ դրույքաչափ և մեծ պարգևատրում մի աշխատանքի ընդհանուր արդյունքում, որի ծավալը ստույգ չի ճշտվում: Փոխարենը պայմանագրում բառացիորեն գրանցվում է, որ ժամկետները խախտելու դեպքում դուք զրկվում եք պարգևատրումից ու տուգանքի եք ենթարկվում:

Մկգբում ձեզ չի հետաքրքրի արտադրական հանձնարարությունների և պարտավորությունների ծավալը, սակայն աշխատանքի անցնելուց հետո, երբ ձեզ ներկայացնեն կրկնակի պարտավորություններ, որ օրվա մեջ 14 ժամ էլ աշխատեք, միննույն է, չեք հասցնելու ամեն ինչ անել: Արդյունքում կգրկվեք ձեր հասանելիք գումարից: Այնպես որ, նախօրոք քննարկեք աշխատանքի ծավալն ու պարզևատրման պայմանները և անպայման գրանցեք այդ տվյալները:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է

- փնտվել նախկին ղեկավարին,
- դժգոհել ձեր անձնական կյանքից և երկրի քաղաքական իրավիճակից,
- խորանալ քաղաքական և փիլիսոփայական դատողությունների մեջ,
- ինեթ նայել գրուցակցին և ագրեսիվ լինել,
- ընկնել մի ծայրահեղությունից մյուսը,
- ստիպել գրուցակցին, որ պատասխանները աքցանով քաշի ձեր բերանից,
- խոսել ժարգոնով, նույնիսկ եթե դա համընդհանուր տարածված է,
- հրաժարվել հոգեբանական և մասնագիտական թեստավորումից,
- հարցերին պատասխանելիս մանրամասներին տրվել և ձգձգել,
- շարադրել ձեր անձնական, ընտանեկան կյանքի, ուսումնական կամ զինծառայության տարիների մանրամասները,
- կաղրերի աշխատակցի հետ կոկետություն անելիս «պնդերես» լինել (մի թեթև կարելի է, նույնիսկ՝ խրախուսելի):

Շարունակեք պայքարել և միշտ հիշե՛ք՝ «ով փնտրում է, նա գտնում է»:

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ՌԵՁՅՈՒՄԵ (ինքնակենսագրական)

Կախված ինֆորմացիայի մատուցման ձևից՝ ռեզյումեները բաժանվում են երեք տեսակի՝ **Ժամանակագրական, ֆունկցիոնալ** և **խառը**:

Ամենանպատակահարմար տարբերակը խառը տիպի ռեզյումեն է:

Ռեզյումեն պետք է բաղկացած լինի մի քանի բաժիններից.

- կենսագրական տեղեկություններ,
- աշխատանք,
- մասնագիտական փորձ
- և լրացուցիչ այլ տեղեկություններ:

Մանրամասն քննարկենք բաժիններից յուրաքանչյուրը:

Կենսագրական տեղեկություններ

Սա ռեզյումեի առաջին բաժինն է: Այստեղ կարելի է առանձնացնել պարտադիր և ոչ պարտադիր (ըստ ցանկության) կետերը: Պարտադիր կետերն են անուն, ազգանուն, հայրանուն, տարիք, կոնտակներ, կրթություն, աշխատանքային փորձ և օտար լեզուների իմացություն:

Անունը և ազգանունը պետք է գրել ամբողջությամբ:

Կոնտակտային տեղեկությունների մեջ պետք է նշել հեռախոսահամարը՝ աշխատանքային (կամ տնային) և բջջային, ինչպես նաև էլեկտրոնային փոստի հասցեն:

Նաև ցանկալի է բացել էլեկտրոնային փոստ: Ցանկալի է ազգանունով և ոչ թե vzzo89 կամ kisolove և այլն:

Նշեք Ձեր ուսումնական հաստատության ամբողջական անվանումը, որը Դուք ավարտել եք, մասնագիտացումը, որակավորումը, ուսուցման ժամանակահատվածը, ուսուցման տեսակը՝ առկա կամ հեռակա:

Ավելորդ չի լինի նշել Ձեր անցած ուսուցումները, սեմինարները և կուրսերը՝ չմոռանալով նշել ստացած վկայականների մասին:

Մասնագիտական փորձը կամ ինչպես ճիշտ ներկայանալ

Եթե կարողանաք ճիշտ մատուցել այս տեղեկությունները, այն կարող է դառնալ Ձեր հաջողության երեք քառորդ մասը:

Աշխատանքի վայրերի մասին պետք է նշել ժամանակագրական կարգով՝ սկսելով վերջինից. սկզբում նշելով ժամանակահատվածը, ապա կազմակերպության անունը, գործունեության ոլորտը և հաստիքը:

Ուշադրություն դարձրեք թափուր տեղի համար գործատուի նախատեսած պայմաններին և մի մոռացեք նշել, որ ունեք համապատասխան փորձ և գիտելիքներ:

Եթե դժվարանում եք հավուր պատշաճի նկարագրել այդ ամենը, ապա փորձեք ինտերնետում գտնել նմանատիպ աշխատանք փնտրողների ռեզյումեներ:

Ցանկալի է տեղեկացնել յուրաքանչյուր աշխատավայրում Ձեր ունեցած ձեռքբերումների և տվյալ կազմակերպության աշխատանքներում Ձեր ներդրումների մասին:

Լրացուցիչ տեղեկություններ

Այս բաժինը նախատեսվում է այն տեղեկությունների համար, որոնց կարելի է անվանել լրացումներ կամ վերջաբան:

Այստեղ հարկ է գրել հնարավոր երաշխավորագրերի մասին՝ նշելով կոնտակտային տեղեկությունները, իսկ եթե դա հնարավոր չէ տվյալ պահի համար, ապա պարզապես գրեք. «Երաշխավորագիրը կներկայացվի ըստ պահանջի»:

Անհրաժեշտ է նշել համակարգչային իմացությունը, սակայն ոչ բոլոր ծրագրերը, որոնց տիրապետում եք, այլ կոնկրետ այն ծրագրերը որոնք անհրաժեշտ են առաջարկվող աշխատանքի համար: Ավելացրեք նաև Ձեր մասին այն տեղեկությունները, որոնք դուք կարևորում եք և որոնք գտնում եք ուշադրության արժանի:

Կարելի է կցել նաև լուսանկար (որոշ մասնագիտությունների համար դա նույնիսկ պարտադիր է՝ քարտուղարուհի, անձնական օգնական, այցելուների հետ աշխատող մենեջեր և այլն):

Ընտրեք այնպիսի լուսանկար, որտեղ Դուք համապատասխան գրասենյակային ոճի հագուստով եք: Եվ վերջապես մի անգամ էլ ուշադիր կարդացեք Ձեր ռեզյումեն, որպեսզի այնտեղ չլինեն բացթողումներ և քերականական սխալներ:

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ

Տարիք _____
քանակ _____

Դատվածությունների

1. Ունե՞ք արդյոք հաշվառում (ազատվելուց հետո ապահոված եք բնակության վայրով) Այո Ոչ
2. Ամուսնացած ե՞ք Այո Ոչ
3. Ի՞նչ սպասելիքներ ունեք հասարակություն վերադարձից

4. Ինչո՞վ եք զբաղվելու ազատվելուց հետո (կամ կցանկանայիք զբաղվել)

5. Ունե՞ք արդյոք մտավախություններ՝ հասարակություն վերադառնալու հետ կապված

6.Ի՞նչ պլաններ ունեք, երբ վերադառնաք հասարակություն

7.Ի՞նչ կցանկանայիք փոխել հասարակության վերաբերմունքում Ձեր հանդեպ

8. Խնդրում ենք նշել 3 պայմաններ (կամ իրավիճակներ), որոնք խոչընդոտում են հասարակությունում Ձեր լիարժեք հարմարվելուն

1.

2.

3.

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ**

Խմբային աշխատանքում ցանկալի հոգեբանական խաղեր

Պատժից ազատվող դատապարտյալների շրջանում սոցիալ-հոգեբանական խմբային աշխատանքների իրականացումը ունի որոշակի առանձնահատկություններ: Այդ պատճառով էլ նախքան կոնկրետ հոգեբանական խնդիրները և վարժությունները ներկայացնելը՝ նպատակահարմար ենք համարում ներկայացնել նաև դրանց նախորդող նախապատրաստական աշխատանքները: Այս տեսանկյունից հատկապես կարևոր է սկզբնական ճիշտ կոնտակտի կայացումը, որը հոգեբան մասնագետից պահանջում է ոչ միայն համապատասխան գիտելիքներ, այլև կոնկրետ դատապարտյալների շրջանում սոցիալ-հոգեբանական խմբային աշխատանքների փորձ և հմտություններ: Խմբում առողջ աշխատանքային մթնոլորտի ձևավորման և պատժից ազատվող դատապարտյալների շրջանում սոցիալ-հոգեբանական խմբային աշխատանքների առավել արդյունավետ իրականացման նպատակով առաջարկում ենք հետևյալ ռազմավարական մոտեցումը և ներքոշարադրյալ հոգեբանական խնդիր-վարժությունները:

- խմբում ինքնաճանաչման և ինքնաակտուալիզացիայի համար բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ձևավորում,
- ուրիշ անձանց վերաբերյալ հումանիստական մոտեցման ձևավորում:

Սոցիալ-հոգեբանական թրենինգն (ՄՀԹ) սկսելուց առաջ հոգեբանը մասնակիցներին ներկայացնում է վերջինիս պահանջները և նպատակը՝ դատապարտյալների հոգեբանական պատրաստականությունը ազատմանը: Մասնակիցներին ուշադրությունը սևեռվում է նրա վրա, որ խմբում հավաքվել են այն դատապարտյալները, ում սպասվում է մոտալուտ ազատումը: ՄՀԹ-ի մասնակիցներին չեն «դաստիարակելու» կամ բացատրական աշխատանքներ իրականացնելու: Ենթադրվում է վերլուծել բարդ իրավիճակներ, որոնցում ցանկացածը կարող է հայտնվել, քննարկել տարբեր խնդիրներ, որոնց պատասխանը միշտ չէ, որ միանշանակ է:

Հոգեբանը հայտնում է, որ առաջին սկզբունքներից մեկը իրար անունով դիմելն է: Եթե բոլորն իրար գիտեն, հոգեբանը պետք է արագ

հիշի բոլորի անունները, ոչ թե մասնակիցների անունները թղթի վրա գրի և փակցնի նրանց զգեստին: Այդ մոտեցումը հիմնարկի պայմաններում բացասական վերաբերմունք կարող է առաջացնել: Այս ամենից հետո հոգեբանը հակիրճ ներկայացնում է խմբային աշխատանքների հիմնական սկզբունքները և պահանջները:

Վարժություն 1. «Արի ծանոթանանք»

Նշանակությունը

- դատապարտյալների ախտորոշումը սեփական անձի վերաբերյալ,
- ինքնաբացահայտման համար պայամանների ստեղծումը,
- սեփական անձի նշանակալիության վերաբերյալ դիրքորոշման ձևավորում:

Ընթացակարգը

Հոգեբանը բացատրում է, որ արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ է, որպեսզի խմբի անդամներն իրար ճանաչեն: Այդ պատճառով, հոգեբանն առաջարկում է բոլորին հաջորդաբար պատմել իրենց մասին: Կարևոր է խոսել ոչ այնքան կենսագրության, որքան անձնային որակների, նախասիրությունների մասին: Շեշտը պետք է դնել դրական որակների բացահայտման վրա: Խմբի բոլոր անդամները և վարողը կարող են հարցեր տալ: Օրինակ՝ ունես արդյոք թուլություններ (բացասական որակներ), կարող ես դրանք թվել, քո գլխավոր արժանիքը, խմբի որ անդամի հետ ես նմանություններ գտնում, ինչպիսի զգացում ես ունենում, երբ խոսում ես քո մասին (լսում ես ուրիշին): Քննարկումը պետք է լինի շատ մեղմ, հետաքրքրվածությամբ: Յուրաքանչյուր մասնակցին ինքնաներկայացման համար տրվում է 5-10 րոպե:

Վարժություն 2. «Ինքնագնահատական»

Նշանակությունը

- Դատապարտյալների մոտ ադեկվատ ինքնագնահատականի ձևավորում

Ընթացակարգը

Մասնակիցներին բաժանվում են 30 հատ քարտեր, որոնց վրա գրված են անձնային տարբեր որակներ (բարություն, նախանձ, աշխատասիրություն, խելացիություն, կասկածամտություն և այլն): Յուրաքանչյուրի խնդիրն է վերլուծել այդ որակներն ըստ կարևորության: Այնուհետև համատեղ քննարկումների ընթացքում խումբը պետք է որոշի, թե որ որակն է ամենակարևորը ընդհանրապես մարդու համար և որ որակն է ինքը կարևորում իր համար: Վիճելի հարցերը քննարկվում են մինչև լիովին համաձայնության գալը: Այս ամենից հետո մասնակիցները համադրում են իրենց ինքնագնահատականը խմբի կողմից «ձևավորած» որակների համեմատությամբ: Հոգեբանը առաջարկում է քննարկել, թե ինչ տեղի ունեցավ խմբում դիսկուսիայի ընթացքում:

Վարժություն 3. «Ներկա և ապագա»

Նշանակությունը

• ապագայի նկատմամբ ադեկվատ դիրքորոշումների ձևավորում

Ընթացակարգ 1

Ա. Նշեք 3 երևույթներ (դրանք կարող են լինել գործողություններ, հոգեվիճակներ), որոնք դուք կցանկանայիք առավել հաճախ իրականացնել կամ ունենալ

1.
2.
3.

Բ. Նշեք 3 երևույթներ, որոնք դուք հիմա անում եք կամ ունեք, բայց կցանկանայիք հետագայում չանել կամ չունենալ

1.
2.
3.

Բացատրեք՝ ինչն է պատճառը, որ չեք անում «Ա» և անում եք ավելի շատ «Բ»:

Ընթացակարգ 2

Փորձեք պատասխանել այն հարցին, թե ինչ էք արել անցյալում, որ չէիք կամենա անել ապագայում՝ ազատվելուց հետո, և հակառակը՝ ինչ չէք արել անցյալում, որ կցանկանայիք անպայման իրականացնել ապագայում:

Վարժություն 4. «Հարձակվողի և պաշտպանվողի կոնֆլիկտ»

Նշանակությունը

• անձի կոնֆլիկտային կողմերի գիտակցում և յուրաքանչյուրի հետ ակտիվ պայքարի փորձի ձեռքբերում:

Ընթացակարգը

Երկու մասնակիցներ նստում են իրար դիմաց: Նրանցից մեկին տրվում է հարձակվողի, մյուսին՝ պաշտպանվողի դերեր: Այնուհետև, նրանք երկխոսություն են սկսում: Թեման ընտրվում է այնպես, որ արդիական լինի դատապարտյալների համար: Օրինակ՝ երկխոսություն ղեկավարի և ենթակայի, հոր և որդու միջև և այլն:

Հարձակվողն ասում է իր գրուցակցին՝ ինչպես ինքը պիտի դրսևորի իրեն, ինչ պետք է արվի դրա համար: Նա քննադատում է բացահայտ գերիշխանության և ինքնավստահության տեսանկյունից:

Պաշտպանվողը պետք է անընդհատ ներողություն խնդրի և արդարանա: Պետք է ասի, թե որքան է նա ցանկանում գոհացնել իր գրուցակցին, որ ամեն ջանք գործադրում է, սակայն ինչ-որ բան միշտ խանգարում է: 5 րոպե հետո փոխվեք դերերով:

Վարժությունն ավարտելուց հետո կիսվեք Ձեր մտահոգություններով, զգացածով: Համեմատեք ձեր կողմից խաղարկված դերերը իրական կյանքում նման իրավիճակներում ձեր կողմից դրսևորված վարքի հետ: Քննարկեք նաև՝ ինչ էիք զգում պաշտպանվողի կամ հարձակվողի դերերը կատարելիս:

Այնուհետև բոլոր մասնակիցները բաժանվում են զույգերի և կատարում այս վարժությունը:

Ինքնակարգավորման հոգեբանական պրակտիկ վարժություններ

Ազատմանը նախապատրաստվող դատապարտյալների հետ տարվող հոգեբանական աշխատանքներում հատուկ ուշադրության է արժանի ինքնակարգավորման հոգեբանական տեխնիկաների ուսուցանման և արմատավորման խնդիրը: Մրա շնորհիվ ակտիվանում են մարդու ներքին ռեսուրսները, հնարավորություն է ստեղծվում ինքնադիագնոստիկայի միջոցով հասկանալ սեփական հոգեվիճակը, լարված և կոնֆլիկտային իրավիճակներում որոնել և գտնել ոչ ստանդարտ, բայց արդյունավետ լուծումներ, առավել սահուն հաղթահարել ներանձնային կոնֆլիկտները: Այս ամենի արդյունքում ստեղծվում են իրական հնարավորություններ մարդու անձնային աճի համար:

Վարժություն 1. Տօգտակար գործ՝

Նշանակությունը

• հումանիստական մոտեցման դիրքորոշման զարգացում ուրիշների նկատմամբ

Ընթացկարգ 1

Հիշեք մի օգտակար (բարի) գործ, որ կատարել եք ուրիշների համար: Ինչում էր դա արտահայտվում, ինչպիսին էին արդյունքները, ինչ եք զգում, երբ օգտակար գործ եք անում կամ հիշում այդ մասին:

Ընթացկարգ 2

Հիշեք՝ արդյոք Ձեզ ահամար ուրիշները կատարել են դրական, անշահախնդիր, օգտակար գործ: Ովքեր էին նրանք, ինչ էիք զգում այդ պահին և հիմա հիշելիս:

Նպատակները

• Պատժի կրման ընթացքում անձնային փոփոխությունների վերլուծություն, դատապարտյալների քրեական վարակվածության ախտորոշում:

Վարժություն 2. «Այսօր, վաղը, ապագայում»

Նշանակությունը

- անձնային փոփոխությունների ուղղվածության վերլուծություն

Ընթացակարգը

Մասնակիցներին տրվում է բլանկ և առաջարկվում աջից ձախ կամ ձախից աջ նշել այն թիվը, որը բնութագրում է այն հատկանիշը, որն ավելի է իրեն համապատասխանում բառ-հատկանիշների մեջ:

Վստահող	3 2 1 0 1 2 3	Չվստահող
Ամաչկոտ	3 2 1 0 1 2 3	Ինքնավստահ
Հարձակվող	3 2 1 0 1 2 3	Պաշտպանվող
Անընդունակ	3 2 1 0 1 2 3	Ընդունակ
Իրատես	3 2 1 0 1 2 3	Երագող
Անտարբեր	3 2 1 0 1 2 3	Զգայուն
Ուրիշների նկատմամբ		
հոգատար	3 2 1 0 1 2 3	Իրենով տարված
Դաժան	3 2 1 0 1 2 3	Բարի
Խարդախ	3 2 1 0 1 2 3	Անկեղծ
Ուժեղ	3 2 1 0 1 2 3	Թույլ
Հոգնած	3 2 1 0 1 2 3	Առույգ
Լավ	3 2 1 0 1 2 3	Վատ

Այս աշխատանքն ավարտելուց հետո մասնակիցներին են բաժանվում նույնատիպ երկուական հարցարաններ և առաջարկվում՝ պատասխանել ինչպես են իրենց տեսնում ազատվելուց 1 տարի հետո և ինչպիսին են իրենք մինչև ազատագրկվելը:

Վարժություն 3. «Շնորհակալություն»

Նշանակությունը

- դատապարտյալների մոտ շնորհակալության վերաբերմունքի ձևավորում, արժեքային կողմնորոշումների վերափոխում

Ընթացակարգը

Մասնակիցներին առաջարկվում է կազմել ցուցակ այն ամենի համար, ինչի համար կարող են շնորհակալ լինել բախտից, ճակատագրից այդ պահին: Ուշադրություն դարձրեք, որ Ձեր ցուցակում ներգրավված լինեն այն ամենը, ինչը արժանի է

երախտապարտության՝ արևի շողերը, առողջությունը, ընտանիքի անդամների առողջությունը, կարդալու, աշխատելու հնարավորությունը և այլն:

Վարժությունն ավարտվում է անձի վարքի և հոգեվիճակի ինքնավերլուծությամբ և ինքնահաշվետվությամբ:

Վարժություն 4. «Երեք տարի»

Նշանակությունը

• Կյանքի պլանների հստակեցում՝ ելնելով ճգնաժամային իրավիճակներից

Ընթացակարգը

Պատկերացրեք՝ Դուք իմացել եք, որ Ձեզ մնացել է ապրել 3 տարի (այս ժամանակահատվածում դուք կլինեք լիովին առողջ): Ինչպիսին է Ձեր առաջին արձագանքը: Առաջարկում եմ մտածել, թե ինչպես և ում հետ եք կամենում անցկացնել այդ ժամանակահատվածը: Ցանկանում եք արդյոք աշխատել կամ սովորել: Ինչ պետք է անպայման հասցնեք անել այդ ժամանակահատվածում:

Այն բանից հետո, երբ Ձեր երևակայությունը կստեղծի երեք տարվա երևակայական կյանքը, համեմատեք այն կյանքի հետ, որ ունեք հիմա: Ինչպիսի կապեր կան դրանց միջև, ինչ տարբերություններ կան: Կա արդյոք որևէ բան երևակայական կյանքում, որ կցանկանայիք գետեղել Ձեր հիմիկվա կյանքում:

Հիմա գիտակցեք, որ Ձեր 3 տարվա կյանքի վերաբերյալ լուրն ընդամենը երևակայության արդյունք էր, որը պետք էր այս վարժության համար: Դուրս նետեք բոլոր մտքերը, բացի նրանցից, որոնք կցանկանայիք պահպանել: Թղթի վրա գրառեք, թե ինչ սովորեցիք այս վարժությունից և ինչ մտքեր եք պահելու երևակայական կյանքի պայմաններից:

Վարժություն 5. «Իմ կյանքի պլանը»

Նշանակությունը

• Անձի կյանքի ուղղու պլանավորում:

Ընթացակարգը

Մասնակիցներին բաժանվում են թղթեր և մատիտներ: Ձեզնից պահանջվում է գրել կյանքի պլան մոտակա 5 տարիների համար: Որոնք են Ձեր 3 հիմնական նպատակները եկող տարվա համար: Ումից են կախված դրանց իրականացումը: Գրառեք նրանք, որոնք կախված են Ձեզնից: Ինչ եք հիմա անում այդ նպատակների իրականացման համար: Ինչպիսի 5 նպատակների կցնականայիք հասնել մոտակա 5 տարիների ընթացքում: Ինչպիսին, Ձեր կարծիքով կդառնա Ձեր կյանքը դրանց իրականացումից հետո: